

3368

# ՔՐԻՍՏՈՆԵՈԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ  
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՑ

Դ. Ա. Գ. Գ. Բ. Ք.

ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏ—ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ա. Յ. Ա. Յ. Ա. Յ. Ա. Յ.

ԳԱՐԻԲԵԼ Ա.Ի.Ս.Գ. Ք.Ա.Հ. ՏԵՐ ԳԱՐԻԲԵԼԵԱՆՑ



ՆՈՐ—ԶՈՒԴԱ

ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆԻ

1940

28(075)

S - 38

79  
57  
8-8

48

2001

28(075)  
S-38

# ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ  
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Գ.Ս.Ա.ԳԻՐՔ

ՀԵՅ ԱՃԱԿԵՐԸ—ԱՃԱԿԵՐԸՈՒՀԽՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Աճխատասիրեց

ԳԱԲՐԻԵԼ Ա.Ի.Ա.Գ. Ք.Ո.Հ. ՏԵՐ ԳԱԲՐԻԵԼԵԱՆՑ

2012

ՆՈՐ—ԶՈՒԴԱ  
ՅՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ

1910

Լ. Տ. ՄԻԱՅՈՒՆ

2010

## ԴԱՍՏԱՐԱԿԱՆ ԴԱՍՏԱՐԱԿԱՆ ԹՈՅՆԱԾՐՈՒԵՄ է

Ազգիս Վեհափառ Հայրապետի պատուիրանի  
համաձայն՝ թ. 1446, 30 օգոստոսի 1894 թուի,  
հայոց եկեղեցական ծխական ուսումնարաննե-  
րում գործադրելու համար, իսկ պետական միջ-  
նակարգ դպրոցներում՝ Կովկասիան դպրոցական  
շրջանի պ. հոգաբարձուի գրութեամբ՝ թ. 8645,  
31-ն հոկտեմբերի 1894 թուի:



94008-62

2088-2002

## ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

### ԱՍՏՈՒՄԾԱՇՈՒԽՉ—ՍՈՒՐԲ ԳԻՐՔ

Աստուածաշոշունչ—Սուրբ գիրքն այն մատեանն է, որ  
Աստուածային հոգու ազգեցութեամբ գրել են Աստծուց  
ընթրուած սուրբ մարդկի, որոնք անուանվում են «Մար-  
դարէք և Առաքեալք»:

Սուրբ գրքի այն մասն՝ որ գրուեց Քրիստոսից առաջ  
մարդարէների ձեռքով, անուանվում է «Հին կտակարան»,  
իսկ Քրիստոսից յետոյ գրուածն առաքեալների ձեռքով  
կոչվում է «Նոր կտակարան»:

Հին կտակարանում Աստուած խոստանում է մեզ, որ  
մարդոց Աղամի մեղքից—յաւիտենական դատապարտութիւ-  
նից—ազատելու համար կուզարկի իւր Միածին Որդուն. և  
այս խոստամբ Աստուած մարդոց սիրտը նախապատրաս-  
տեց օրինակներով ու մարդարէների միջոցով խոստացած  
Փրկչին ընդունելու:

Նոր կտակարանը վկայում է, թէ Աստուած իրաւի շնոր-  
հեց մարդոց իւր Միածին Որդին, որ է «Յիսուս Քրիստոս»:

Հին կտակարանը պարունակում է քառասուն և հինգ  
(45) գիրք և իւր բովանդակութեամբ չորս կարգի է բա-  
ժանվում:

1. Օրինադրական. — Ծննդոց, Ելից, Ղետացւոց, Թուոց  
և Երկրորդ օրինաց գրքերն, որոնք գրուած են Մովսէսի  
ձեռքով և կոչվում են Մովսէսի օրէնք կամ Հնդամատեան,  
սոքա պարունակում են հին օրէնքներն, Աստծու խոս-  
տումներն և ուխտը:

2. Պատմական.—Յեսուտայ, Դատաւորաց, Հռութալ, Թագաւորաց, Մնացորդաց, Եզրասալ, Նեեմալ և Եսթերալ գրքերն, որոնք գլխաւորապէս պարունակում են բարեպաշտ և առաքինի մարդոց պատմութիւնները:

3. Բարոյական կամ վարդապետական.—Յովքալ, Դաւթի և Սողոմոնի գրքերն, որոնք պարունակում են Աստուածգիտութեան ուսումն և մարդկային կեանքին վերաբերեալ կանոններ և խրատներ:

4. Մարգարէական.—Եսայի, Երեմիայի, Եզեկիէլի, Դանիէլի և միւս տասներկու փոքր մարդարէնների գրքերն՝ որոնք պարունակում են մարդարէութիւններ և գուշակութիւններ Յիսուս Քրիստոսի տնօրէնութիւնների մասին:

Նոր կտակարանը պարունակում է քսան և եօթն (27) գիրք և իւր բովանդակութեամբ չորս կտրգի է բաժանվում:

1. Օրինագրական.—Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յովհաննու գրուածները, որոնք կոչվում են Աւետարան, որով ճետե բարութեան և փրկութեան աւետիք են պարունակում, այսինքն աւետում են մարդկութեանն Փրկչի գտլուստը, Նորա ձեռքով եղած գերազոյն բարիքը, Նորա երկրաւոր կեանքի պատմութիւնը, Նորա հրաշալի գործերը, Նորա փրկարար և կենդանաբար վարդապետութիւնները, վերջապէս Նորա մահը խաչի վերայ, փառաւոր յարութիւնն և սքանչելի համբարձումն:

Ծանօթ. Թէն չորս աւետարանիչներն էլ խօսում են Յիսուս Նրիստոսի մասին, սակայն ամնն մի աւետարանն իւր առանձնայատկութիւնն ունի, նայելով թէ՝ որ եկեղեցու համար է գրուած և թէ ինչ նպատակով։ Սյապէս՝ Մատթէոսն՝ իւր աւետարանը գրկով հրէութիւնից դարձած քրիստոնեանների համար Քրիստոսի համբարձումից 8 տարի յետոյ, զլիաւորապէս խօսում է թէ՝ Յիսուս Քրիստոս հէնց այն Մեսսիան է, որ Աստուած խօստացել էր հրէից ազդին, ուստի նա սկսում է Յիսուսի ճիւղագրութիւնն Աբրահամից ու Դաւթից և յոյց է տալիս, որ Նորա վերայ կատարուեցան Մեսսիայի մասին եղած բոլոր գուշակութիւնները։ Մարկոսը գրեց համբարձումից 15 տարի յետոյ հեթանոսութիւնից դարձածների համար, ուստի նոցա Յիսուսի աստուածութեան մէջ համոզելու համար զլիաւորապէս պատմում է նա Յիսուսի հրա-

չադործութիւնների մասին։ Ղուկասը գրեց համբարձումից 17 տարի յետոյ։ Նա աւելի մանրամասն և հետեւզութեամբ է խօսում Յիսուսի երկրաւոր կեանքի մասին, որպէս զի հաւատացեալներին քրիստոնէական հաւատի մէջ ամրապնդէ։ Յովհաննէս՝ իւր աւետարանը նախընթաց աւետարաններից շատ ուշ գրելով—համբարձումից 53 տարի յետոյ—նշանաւոր կերպով լրացնում է առաջին երկը աւետարանների բովանդակութիւնն և աշխարհի Փրկչի աստուածացային արժանաւորութիւնը բացատրում է մի առանձին ոգով։

2. Պատմական.—Դործք առաքելոց գիրքն, որ գրել է Ղուկաս աւետարանիցը Յէօփիլէսի խնդիրքով և պատմում է Սուրբ Հոգու իջնելն առաքեալների վերայ և Քրիստոսի եկեղեցու սկզբնական վիճակը։ Դիխաւորապէս խօսում է Պէտրոս և Պօղոս առաքեալների քարոզութիւնների մասին։

3. Բարոյական կամ վարդապետական.—Կաթողիկեաց կամ ընդհանրական եօթն գիրքն՝ որոնցից մէկը գրեց Յակովոս առաքեալն. երկուսը՝ Պետրոս առաքեալն. երեքը՝ Յովհաննէս և մինը՝ Յուդա առաքեալն. այլև Պօղոս առաքեալը գրեց տասն և չորս մասնաւոր թղթեր—մինը՝ Հռովմայեցոց, երկուսը՝ Կորնթացոց, մինը՝ Գաղատացոց, մինը՝ Ենեսացոց, մինը՝ Փիլիպեցոց, մինը՝ Կողոսացոց, երկուսը՝ Թեսազոնիկեցոց, երկուսը՝ Տիմոթէոսին, մինը՝ Տիտոսին, մինը՝ Փիլիմոնին և մինն՝ Եբրայեցոց. այս բոլոր գրքերն Աւետարանում տւանդած հաւատի վարդապետութիւնների բացատրութիւններն ու մեկնութիւններն են։

4. Մարգարէական.—Յովհաննու լայտնութիւնն, որ նկարագրում է Քրիստոսի եկեղեցու ապագայ փառաւոր վիճակը։

Թէ հին և թէ նոր կտակարանի գրքերն, որոնք թուով 72 են, որոշուած են Սիօն Կաթողիկոսի օրով 768 թ. Պարտաւ քաղաքում գումարած ժողովի մէջ։

Ծանօթ. Ադամից մինչև Մովսէս մարգարէն աստուածային ծշմարտութիւններն աւանդութեամբ պահպանվում էին։ Մովսէսը գրեց Աստուածանչի առաջին հինգ գրքը 3900 տարի աշխարհի ստեղծագործութիւնից յետոյ։ հին կտակարանը գրուեց երրայեցերէն։ Դանիէլի գրքը մի քանի զլիները՝ քաղցացոց լիզուով։ նոր կտակարանը՝ յունարէն։ Ամանից առաջ թարգմանուեց հին

կտակարանը Փարոս կղզու վերայ Պտղոմէոս Թիլագելֆոսի օրով  
271 թուին Քրիստոսի ծննդից առաջ յունարէն. այս թարգմանու-  
թիւնը կոչվում է Կօթանասնից թարգմանութիւն, որից թարգ-  
մանուած է մեր Աստուածաշունչը Սուրբ թարգմանչաց ձեռքով  
436 թուին:

### ՔՐԻՍՏՈՆԷԿԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Քրիստոնէական վարդապետութիւնն այն ուսումն է,  
որ ինքն Յիսուս խօսքով և գործով ու յետոլ Նորա առա-  
քեալները սովորեցրին մեզ մարդոցս թէ խօսքով, թէ գրով  
և թէ գործով աշխարհիս վերալ Աստծու կամքի համաձայն  
ապրելու և յաւիտենական կեանքը ժառանգելու համար,  
տիփնքն ճանաչել ճշմարիտ Աստծուն և հաւատալ Նորան,  
սիրել Նորան—կատարել Նորա պատուիրանները: «Որ զբանն  
իմ լսէ և հաւատալ Ալնմ, որ առաքեացն զիս. ընդունի  
զկեանս յաւիտենականս». Յով. Ե. 24:

«Այս են յաւիտենական կեանք, զի ծափիցեն զքեզ  
միայն ճշմարիտ Աստուած. և զոր առաքեցեր զՅիսուս  
Քրիստոս». Յով. Ժէ. Յ:

### ՀԱՒԱՏ

Հաւատն Աստծուց մեզ պարգևած մի ներքին լոյս է,  
շնորհք է, որով կարողանում ենք ճանաչել, ընդունել և  
խօստովանել այն աստուածալին յայտնութիւնները—ճշմար-  
տութիւններն, որ Աստուած պարգևել է մարդոցս փրկու-  
թեան համար:

Մենք պէտք է հաւատանք աստուածալին յայտնու-  
թիւններին հէնց այն պատճառով, որ նոցա մեզ տուող  
Աստուած արգար է և ճշմարիտ:

Հաւատն՝ որ ներքին շնորհք է, քրիստոնէայն պարտա-  
ւոր է արտայութել գործով և խօստովանել բերանով:

«Ոչ ամենայն որ ասէ զիս Տէր, Տէր, մտցէ յարքայու-  
թիւն երկնից, այլ որ տանէ զկամս Հօր իմոյ, որ յերկինս  
է» Մատթ. Ե. 21.

Քրիստոնէական հաւատի հիմն է ինքն Յիսուս Քրիս-

տու, որի միջոցով Աստուած խոստացաւ փրկել մարդկան  
ազգը յաւիտենական դատապարտութիւնից—Աղամի մեղքից.  
այս խոստումն Աստուած արեց նախ՝ նախամարդոց, նոցա  
դրախտից արտաքսելու ժամանակ՝ օձին ասելով. «Եւ եդից  
միշնամութիւն ի մէջ քո և ի մէջ կնոջդ. և ի մէջ զաւակի  
քո և ի մէջ զաւակի դորա. նա սպասեցէ քում գլխոյ, և  
դու սպասեցես նորա գարշապարի». Ծննդ. Գ. 15. յետոյ՝  
նահապետներին, Մովսէսին և միւս մարգարէներին՝ «Բա-  
զում մասամբք և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ  
Աստուած ընդ հարս մեր մարգարէիւք. ի վախճան աւուրցու  
ալսոցիկ խօսեցաւ ընդ մեզ Որդւովն». Եբր. ա. 1—2:

Քրիստոնէական հաւատը կայանում է նոյն իսկ Քրիս-  
տոսի երկրպագութեան և նորա պատուիրանների» կատար-  
ման մէջ:

Յիսուս ուսուցանում էր մարդոց խօսքով և գործով՝  
«Ձոր սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել»—Գործք ա. 1.  
իսկ նորա առաքեալներն ու նոցա յաջորդները թէ խօսքով,  
թէ գործով և թէ գրով սովորեցնում էին այն բոլոր ճշմար-  
տութիւններն, ինչ որ նոքա սովորել էին Յիսուսից՝ «Դնա-  
ցէք այսուհետեւ աշակերտեցէք զամենալն հեթանոսս, ու-  
սուցէք նոցա պահել զամենալն, զոր ինչ պատուիրեցի ձեզ».  
Մատթ. Իլ. 19—20:

«Հաստատուն կացէք, և պինդ կալարուք զաւանդու-  
թիւնսն, զոր ուսարուք եթէ բանիւ և եթէ թղթով մե-  
րով». ա. թեսաղ. Բ. 14:

### ՔՐԻՍՏՈՆԷԿԱԿԱՆ ՀԱՒԱՏԻ ՅԱՏԿԱՆԻԹԻՒՆՆԵՐԸ

Քրիստոնէի հաւատը պէտք է լինի «լուսաւոր, հեզ,  
հաստատ և կենդանիս»:

ա. Քրիստոնէի հաւատը «լուսաւոր» է, երբ նա միշտ  
ուսումնասիրում է սուրբ Գիրքն, ուսանում է նորա մէջ  
եղած աստուածալին ճշմարտութիւններն և Աստծուն ու  
մարդոց վերաբերեալ բոլոր պարտականութիւնները՝ «Բննե-  
ցէք զգիրս, զի դուք համարիք նոքօք ունիլ զկեանս յաւի-  
տենականս». Յով. Ե. 39:

Ք. Քրիստոնէի հաւատը կը լինի «Հեզ», երբ սուրբ Գրքի մէջ պարունակած մարդկային մտքին անհասանելի աստուածային խորհրդներին և ճշմարտութիւններին կը հաւատագի հեզութեամբ, ինչպէս որ Դաւիթ մարգարէն իւր համար վկայում է՝ «Հաւատատցի զոր և խօսեցայ, և ես խոնարհ եղէ յոյժ». Սաղ. ձմէ:

Գ. Քրիստոնէի հաւատը «Հաստատ» կը լինի, երբ նա ամբարիշտ մարդոց գատողութիւններից, օրինակներից և գայթակղելի գոլծերից չի գայթակղուիլ, անշարժ կը մնայ իւր հաւատալիքի մէջ և աշխարհի նեղութիւնների ու փորձանքների տակ չի ընկճուիլ, այլ կը զօրանալ ինքն իւր հաւատով ինչպէս որ Պողոս առաքեալը պատուիրում է՝ «Արմատացեալք և շինեալք ի նա, և հաստատեալք ի հաւատս, որպէս ուսայքն». Պող. առ. Կող. Բ. 7:

Դ. Քրիստոնէի հաւատը «կենդանի» է, երբ նա ունենում է այն ամեն բարի գործերն, որ պահանջում է մեր հաւատն, ինչպէս որ Յակովը առաքեալը պահանջում է՝ «Ձինչ օգուտ իցէ եղբարք իմ սիրեցեալք, եթէ ասիցէ ոք հաւատս ունիլ և գործս ոչ ունիցի, միթէ հաւատք առանց գործոց ապրեցուցանեն զնա... հաւատք առանց գործոց մեռեալ է». Յակ. Բ. 14. 29:

### ՀԱՒԱՏԸ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Քրիստոնեայն հաւատով մօտենում է Աստծուն և խաղաղութիւն ու արդարութիւն է հաստատում իւր և իւր Արարշի մէջ, ինչպէս որ Պողոս առաքեալն ասում է՝ «Այսուհետեւ արդարացեալք ի հաւատոց զխաղաղութիւն կալցուք առ Աստուած՝ ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի». Հոռվ. Ե. 1.

Քրիստոնեայն հաւատով որդեգրվում է Հօր Աստծուն, ինչպէս որ Պողոս առաքեալն ասում է՝ «Ամենեքին որդիք Աստուծոյ էք հաւատով ի Յիսուս Քրիստոս». Գաղա. Գ. 26:

Քրիստոնեայն հաւատով ստանում է յաւիտենական կեանք, ինչպէս որ Քրիստոս ասում է՝ «Ամենայն որ հա-

ւատայ ի նա, մի կորիցէ, այլ ընկալցի զկեանս յաւիտենականս». Յով. Գ. 19:

Քրիստոնեայն հաւատով բնակեցնում է իւր մէջ Յիսուսին, որ է կատարեալ երջանկութիւն և յաւիտենական կեանք՝ «Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, միս բնակեցի և ես ի նմա». Յով. Զ. 57:

Քրիստոնեայն հաւատով զօրանում է յաղթող հանդի. սանալու աշխարհի և իւր մարդկային չար ձգտումների դէմ՝ «Ամենայն որ յԱստուծոյ ծնեալ է, յաղթէ աշխարհի՝ և այս է յաղթութիւն, զոր յաղթեմք աշխարհի՝ հաւատքն մեր». ա. թ. Յով. Ե. 4:

### ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏԸ

Այն բոլոր ճշմարտութիւններն, որոնք պէտք է լինին Քրիստոնէի հաւատալիքը, բովանդակած են համառօտակի հաւատի հանգանակի մէջ, որի ալլեհւը սուրբ Գիրքն է:

Քրիստոնէութեան սկզբներում, ինչպէս Յիսուս աւանդել էր, հաւատի հանգանակը կալանում էր մի ժիայն հետեւեալ խօսքերի մէջ՝ «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ», (Մատթ. ԽԸ. 20). ուրեմն հանգանակի էական մասերն են՝ Հայը, Որդի և սուրբ Հոգի. Այլև Յիսուս այս պաշտելի անունների հետ տւանգեց և հետեւեալը՝ «Աւսուցեցէք նոցա պահել զամենալին որ ինչ պատուիրեցի ձեզ, և ահա ես ընդ ձեզ եմ զամենալն աւսուրս մինչև ի կատարած աշխարհի». (Մատթ. ԽԸ. 20): Այս համառօտ հանգանակով առաջին դարերի Քրիստոնեաները բաւականանում էին. առաքեալներն և աշակերտներն էլ նորա պատուէրի համաձայն սկզբումն աւանդում էին բանաւոր և յետոյ թէ բանաւոր և թէ զրով։ Բայց երբ Քրիստոնեաների միջից այնպիսի մարդիկ տռաջ եկան, որոնք մոլար վարդապետութիւններ էին քարոզում Քրիստոսի աստուածութեան, անձնաւորութեան և մարմնաւութեան դէմ, այլև սուրբ Հոգու աստուածութեան դէմ, ուստի հարկ զգացուեց այդ մոլար վարդապետութիւնները (Հերետիկոսութիւն) հերքելու համար այն ժա-

մանակի բոլոր քրիստոնեալ եկեղեցիների ներկայացուցիչներից ժողով կազմել - այդպիսի ժողովն անուանվում է տիեզերական, որոնք մի քանիսն են եղել, սակայն մեր եկեղեցին ընդունում է առաջին երեք տիեզերական ժողովների:

Ծանօթ. Առաջին. Տիեզերական ժողովը գումարուեց 325 թ, Բիւթանիայի Նիկիա քաղաքում, ուր ներկայ էին 318 հայրապետներ և սուրբ Հոգու ներշնչմամբ ու միաբան հաւանութեամբ հերքելով Աղեքսանդրացի յոյն Սրբութ մոլար վարդապետութիւնը գրեցին **(Հիսուսիալ)** հանդանակը՝ «Հաւատամք ի մի Աստուած Հայր առենակալ, արարիչ ամենայն երեխեաց և աներեսութից; Եւ ի մի Տէր Յիսուս Ռիսուս Որդին Աստուած, ձնեալ ի Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր. Աստուած յԱստուած, Լոյս ի Լուսոյ, Աստուած ձշմարիտ յԱստուածոյ ճշմարտէ, ձնեալ, ոչ արարեալ, համակրցակից Հօրն: Որով ամենայն ինչ եղի, որ յերկինս և որ ի վերայ երկրի Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իշեալ մարմնացեալ և մարդացեալ, չարչարեալ և յարուցեալ յերրորդ աւուր, և ելիալ յերկինս և գալոց է միւս անգամ դատանլ զկենդանիս և զմենեալու: Եւ ի Հոգին սուրբ: Իսկ որք ասենն, էր երբեմն, յորժամ ոչ էր, և մինչև ձնեալ ոչ էր, և թէ յոչէից եղի, կամ յայլմէ հնթակայութենէ կամ յէութենէ ասեն լինել, կամ ստեղծական կամ ալլայլի, կամ փոփոխելի զՄրդին Աստուածոյ. զնոսա նղովէ կաթողիկէ և առաքելական եկեղեցիր»:

Սյա ժողովին հայաստանեաց եկեղեցու ներկայացուցիչն էր սուրբ Գրիգոր Լուսաւորչի որդին՝ սուրբ Սրբութակէս, որ վերագունակ հայաստան իւր հետ բերեց Նիկիոյ հանդանակն և 20 քսան յօդուածով կանոններ:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը 326 թուին ազգային ժողով գումարեց Վաղարշապատում և այնտեղ կանոններն ու հանգանակն ընդունելուց յետոյ վերան աւելացրեց—ասելով «Իսկ մեք փառաւորիսցուք, որ յառաջ քան զյաւիտեանս երկիրապագանելով սրբոյ երրորդութեան, և միոյ Աստուածութեան—Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն», որ միայն մեր եկեղեցու մէջ է կարդացվում:

Երկրորդ Տիեզերական ժողովը գումարուեց 381 թուին Կոստանդինոպում, ուր ներկայ էին 150 հայրապետներ, որոնցից մինն էր մեր հայրապետ Ներսէս Մեծը: Սյա ժողովը հերքեց Կ. Պօլսի Մակեդոն պատրիարքի սուրբ Հոգու դէմ քարոզած հերետիկոսութիւնն ու Նիկիական հանդանակի վերացրել են Կ. Պօլսի առաջին ժողովի յօրինած հանդանակից: Բացատրութիւնների և յաւելուածների բուն նպատակն էր, մինչև Եֆեսոսի ժողովը ծագած աղանդների և հերետիկոսների առաջը փակեն և թոյլ չտալ, որ նոքա որեէ կերպով ներս մտնեն մեր ուղղափառ դաւանութեան մէջ:

Մեր եկեղեցին Նիկիայի հանդանակը, որ կարդացվում է այսպէս՝ «Հաւատամք ի մի Աստուած, Հայրն ամենաակալ, արարիչ երկնի և երկրի, երեկեաց և աներեսութից: Եւ ի մի Տէր Յիսուս Քրիսոս, Որդին Աստուածոյ միածին, ի Հօրէ ծնեալ յոռաջ քանի մասնաւոյն յաւիտեանս Աստուած յԱստուածոյ, Լոյս ի Լուսոյ, Աստուած ձշմարիտ, յԱստուածոյ ճշմարտէ, ձնեալ, ոչ արարեալ, համագոյակից Հօրն: Որով ամենայն ինչ եղի յերկինս և յերկրի: Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իշեալ յերկնից, մարմնացեալ ի Հոգւոյն արքոյ եւ ի Մարիամայ կուսեն եւ Ենեմարդացեալ, խաչեալ, վասն մեր առ Պօնտացի Պիլատոսն, և չարչարեալ և բաղեալ յարուցեալ յերրորդ աւուր ըստ գրոց և ելեալ յերկինս և նատեալ ընդ ազմէ Հօրն, գալոց է միւս անդամ հանդերձ փառօք, գատել զկենդանիս և զմենեալու, որոյ բագաւորութիւն ո՞չ եղիցի վախճան: Եւ ի Հոգին սուրբ, Տէրն, Կենդանարարն, ի Հօրէ ելողն, ընդ Հօր և Որդւոյ երկրպագակիցն և փառաւորակից, որ խօսեցաւ մարդարէիւք: Ի մի սուրբ կաթողիկէ և առաքելական եկեղեցից: Խոստավանիմք ի մի մկրտութիւն, ի քաւութիւն մեղաց: Ակն ունիմք յարութեան մեռելոց և կենաց հանդերձեալ յաւիտեանին, ամէն:

Երրորդ Տիեզերական ժողովը գումարուեց 431 թուին Եփեսոսում 200 հայրապետների ներկայութեամբ. այս ժողովը հերքեց Կ. Պօլսի Նեստոր պատրիարքի մոլորութիւնը: Այս ժողովին թէ մեր հայրապետն ՍՍ.ՀԱ.Կ ՊԱ.ԲԹ.ԵՒ անձամբ չէ զտնվում, ուսկայն այդ ժողովի որշումներն ընդունում է մեր Դ.եսնդ, Կորիւն, Յովնան և Արձան վարդապետների ձեռքով:

Մեր եկեղեցին Նիկիոյ սուրբ ժողովի հանդանակն ընդունելով տեղ—տեղ կարենոր յաւելուածներով ձնիացրել է և պարզաբանել, մասամբ սուրբ Լուսաւորչի և մասամբ էլ նորա սուրբ յաջորդների ձեռքով՝ Եփեստոի Տիեզերական ժողովից առաջ: Բոլոր բացատրութիւնները, կամ յաւելուածները մեր սուրբ հայրապետները վերցրել են Կ. Պօլսի առաջին ժողովի յօրինած հանդանակից: Բացատրութիւնների և յաւելուածների բուն նպատակն էր, մինչև Եփեստոի ժողովը ծագած աղանդների և հերետիկոսների առաջը փակեն և թոյլ չտալ, որ նոքա որեէ կերպով ներս մտնեն մեր ուղղափառ դաւանութեան մէջ:

Մեր եկեղեցու Նիկիական հանդանակը կարդացվում է այսպէս՝ որ բաղկացած է տասներկու մասերից:

1. «Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենաակալ, յԱրարիչն երկնի և երկրի, երեւլեաց և աներեսութից:

2. «Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ Միածին, այսիքն յԵռթենէ Հօր. Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ և ոչ արարած. նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս և ի վերալ երկրի, երեկիք և աներեոլիթք:

3. «Որ յաղտգս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարգացաւ, ծնաւ կտտարելապէս ի Մարիամալ սրբոյ կուսէն՝ Հոգւովն սրբով. որով էաւ զմարմին, զհոգի և զմիտ և զամենալն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք:

4. «Զարչարեալ. իւաչեալ, թաղեալ:

5. «Յերբորդ աւուր յարուցեալ:

6. «Ելեալ ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր:

7. «Թալոց է նովին մարմնովն և փառօք Հօր, ի դտուել զկենդանիս և զմեռեալս. որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան:

8. «Հաւատամք և ի սուրբ Հոգին, յանեղն և ի կտտարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետուրանս, որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքետն և բնակեցաւ ի սուրբսն:

9. «Հաւատամք և ի մի միայն ընդհանրական և առաքելական եկեղեցի:

10. «Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց:

11. «Ի յարութիւն մեռելոց:

12. «Ի դատաստան յաւիտենից Հոգւոց և մարմնոց, յարքալութիւն երկնից, և ի կեանս յաւիտենականս:

Իոկ որք ասենն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր Որդին, կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր սուրբ Հոգին, կամ թէ՝ յոչէից եղեն, կամ յալլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ

և կամ զսուրբ Հոգին, և թէ փոփոխելիք են, կամ այլալելիք, զայնպիսիսն նզովէ Կաթողիկէ և առաքելական սուրբ եկեղեցի:

Մանօր, Բացի Նիկիական հանգանակից մեր եկեղեցին ունի իւր գուղղափառ հաւատոյ գաւանութիւնը», որ ամեն ժամանակ պատարագիչ քահանան, առաւօտեան ժամասացութիւնից առաջ՝ «Հրաժարիմք»-ից յետոյ ձեռնամած ասում է՝ «Ուստի անունութիւնիմք և հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն Աստուած անեղ, անծին և անսկիզբն. այլի ծնող Որդւոյ և բղիսդ Հոգւոյն սրբոյ:

«Հաւատամք զբանն Աստուած անեղ, անժամանակ, ոչ ծնեալ, այլ բղիսեալ ի Հօրէ, էակից Հօր և փառակից Որդւոյ:

«Հաւատամք զուրբը Հոգին Աստուած՝ անեղ, անժամանակ, ոչ ծնեալ, այլ բղիսեալ ի Հօրէ, էակից Հօր և փառակից Որդւոյ:

«Հաւատամք զերբորդութիւն սուրբ՝ մի բնութիւն, մի աստուածութիւն, ոչ երեք աստուածք, այլ մի Աստուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն, արարիչ երեկելեաց և աներեութից:

«Հաւատամք յեկեղեցի սուրբ զթողութիւն մեղաց՝ հազորդութեամբ սրբոց:

«Հաւատամք զմինն յերից անձանց զբանն Աստուած, ծնեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. ի ժամանակի իջեալ յԱստուածածին կոյն Մարիամ. առեալ յարենէ նորա միաւորեաց ընդ իւրում Աստուածութեանն իննամսւայ ժուժկակեալ յարդանատի անարատ կուսին. և եղի Աստուածն կատարեալ, մարդ կատարեալ հոգւով և մաօք և մարմնով. մի անձն, մի դէմ և միաւորեալ մի բնութիւն. Աստուածն մարգացեալ ասանց փոփոխման և առանց այլալութեան, անսկրմն յզութիւն և անապական ծնունդ. որպէս ոչ է սկիզբն Աստուածութեան նորա՝ և ոչ վախճան մարդկութեան նորա. զի Յիսուս Քրիստոս երէկ և այսօք, նոյն և յաւիտեան:

«Հաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս շրջեալ ի վերայ երկրի, յետ երեսուն ամաց եկեալ ի մկրտութիւն. Հայր ի վերուստ վկայեալ դա է որդի իմ սիրելի, և Հոգին սուրբ աղաւնակերպ իջեալ ի վերայ նորա. փորձեալ ի աստանայէ և յաղթեալ նմա, քարոզեալ մարդկան զիրկութիւն, աշխատեալ մարմնով, վաստակեալ, քաղցեալ և ծարաւեալ. յետոյ եկեալ կամաւ ի չարչարանս, խաչեալ և մեռեալ մարմնովն, և կենդանի Աստուածութեամբն, մարմինն եկեալ ի գերեզմանի միաւորեալ Աստուածութեամբն,

թեամբն, և Հոգւովի իջևալ ի դժոխս՝ անրաֆանելի Աստուածութեամբն, քարոզեալ հոգւոցն, աւերեալ զդժոխս և ազատեալ զհողիսն. յետ երից աւուրց յարուցեալ ի մեռելոց և երեխալ աշակերտացն:

«Հաւատամբ զՏէրն մեր Յիսուս Քրիստոս նովին մարմնովն համբարձեալ յերկինս և նստեալ ընդ աջմէ Հօր. այլ և դալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ի դատել գլուխանիս և զմեռեալս, որ և յարութիւն ամենայն մարդկան։

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՀԱՐԱ

ՄԻԱԽԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ

ՍԱԻՐԲ ԵՐԻՐՈՐԴՈՒԹԻՒՆ

«Հաւատավոր ի մի Ասմած.....».

Այս խօսքերով խոստովանում ենք, որ Աստուած կայ  
և «մի» է, ինչպէս որ վկայում է Հոգին սուրբ Մովսէս  
մարգարէի բերանսվ՝ «Լուր Խորացէլ, զի Տէր Աստուած  
մեր, Տէր մի է». Բ. օրինաց Զ. 4., և Պօղոս առաքեալը  
թէ «Մի Աստուած և Հայր ամենեցուն որ ի վերայ ամե-  
նայնի և ընդ ամենեսին և յամենեսին ի մեզ». Եփես. Պ. 6.  
իսկ թէ Աստուած ինչ է, մեզ անհասկանալի է նորա գո-  
յութիւնը կամ ընչութիւնը. միայն Սուրբ Գրքից գիտենք,  
որ Աստուած Հոգի է, Տէր է:

Նանօր Ամեն մի կրօնի հիմքը կազմում է Աստծու գոյութիւնը, այս ճշմարտութեան մէջ մարդկացին ազգը միշտ համոզուած է եղել: Զկայ և չի եղել մի այնպիսի ժողովուրդ երկրիս վերայ, որ այս կամ այն ձեռվ մի որեէ գաղափար չունենայ Աստծու մասին, միմիայն անմիտը կարող է ասել, որ Աստուած չկայ. (Սագմ. ԺԳ. 1.):

Աստծու գոյութիւնը կարող ենք հաստատել նախ՝ Տիեզեր-քով։ Երկրիս վերայ ոչ մի բան ինքն իրան կամ դիպուածով առաջ չէ եկել, այլ հետեանք է մի պատճառի. աշխարհիս գոյութիւնն էլ ենթակայ է այս օրէնքին, ուստի մեր բանականութիւնը մեզ ասում է, որ կայ սկզբնապատճառ, որից առաջ են գալիս բոլոր հետեանքներ՝ ներուոծա մենացն՝ առ պատճառն Աստիւած է։

Երկրորդ՝ Տիեզերքի մէջ նզած նպատակայարմար կարգ ու կանոննովն. Ներդաշնակութիւնն ու գեղեցկութիւնը պող են տալիս, որ

չկայ կարգադրութիւն առանց կարգադրիչի; Բնութեան մէջ առարկաները խելացի իմաստուն կերպով կարգադրուած են, այդ կարգադրութիւնը տեսնում ենք նոցա մասների կանոնաւոր փոխադարձ յարաբերութեան մէջ (օրինակ, ծառ), ամենիմաստ կերպով ուղղած այդ բոլորը դէպի մի ընդհանուր նպատակի, այսինքն նոցա գոյութիւնը պահպանելուն: Ամբողջ աշխարհում ամեն բան այնպէս կարգաւորած է և մի ամրողութիւն է երևում, կարծես թէ մի ահազին գործառուն լինի. որի մէջ ամեն մի անդամը իրար հետ սերտ յարաբերութիւն ունի, որի մէջ ամեն բան փոխադարձ իրար ծառայում են և իրեն միջոց և իրեն նպատակ՝ ուղղուելով մի ընդհանուր նպատակին: Սյս նպատակայարմար, իմաստուն կարգադրութիւնը ցոյց է տալիս, որ աշխարհու ստեղծուած է առաջուց նախամտածած իմաստուն յատակագծով և թէ, ապա ուրեմն, աշխարհի արարչակործ պատճառը բնական, ամենիմաստ անձնաւոր էութիւն է: Սյս հաստատութիւնը գտնում ենք և սուրբ Գլքքում: «Երկինք պատմեն զիասս Աստուծոյ, և զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն» (Սաղմ. Ժ. 1—7). «Որպէս զի մեծ են գործք քո, Տէր, զամենայն ինչ իմաստութիւնմբ արաբեր և լցան երկիր ստեղծուածովք քաղք» (Սաղմ. Կ. 24):

Երրորդ՝ ինչպէս երկնային մարմններն և երկիրն իւր կարգն ու կանոնավ մի որոշ օրէնքով են ընթանում. այնպէս էլ մեր ներքին աշխարհը՝ սիրան էլ որոշ օրէնքների է հետեւում, ուրեմն ափեկերքի մէջ և մեր ներսն այս կանոնաւորութիւնը չի կարող առանց կանոնի, առանց օրէնքի լինել, հետևապէս կայ մէկը, որ օրէնստու է, որին ամեն ինչ հնազանդվում է՝ դա Աստուածն է:

Օրէնքը, որ մեր հրպու (սրաի) մէջն է և որ ապօւմ է բարոյական օրէնք՝ խիզճ, անդայման հրամայում է բարի գործել, չարից հեռանալու երր բարի ենք գործում, ներքինն ուրախ է, երր վատ, չար բան ենք գործում, եթէ մինչեւ անդամ ալդ մասին ոչ ոք չփրտենայ, այն ժամանակ էլ խիզճը մի կրծող որդն է դառնաւմ, որ երբէք չէ մեռնում. ուրեմն, մեծ օրէնստուն, որ մեզ համար բարի է կամենում, մեր սրաի մէջ զրել է խիզճը բարի նպատակի համար, այսպէս Աստուած բարի օրէնստու է:

Սակայն Աստծու միութեան մէջ կան երեք անձինք ա. Հայր Աստուած, որ է պատմաս Որդու անձառ և անանժամանակ ծննդեան և Հոգւոյն սրբոյ անհաս և անժամանակ բղխման, բ. Որդի Աստուած յաւիտենական ծնունդ Հօրից և գ. Հոգին սուրբ յաւիտենական բղխումն Հօրից:

Այս երեք անձնաւորութիւնները կազմում են մի անձառ ելք միութիւն, որովհետև սոքա երեքն էլ մի են և հաւասար բնութեամբ, էութեմաբ՝ «Երեք են, որք վկայեն լելի կինս Հայր, Բան և Հոգի սուրբ և սոքա երեքինս մի են» ա. թ. Յով. Ե. 7:

«Մկրտեցէք զնոսա՝ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ», Մատթ. Ի. 19:


«Հաւատատան՝ եթէ Հայր լիս և ես ի Հայր. ես և Հայր իմ մի եմք», Յով. Ժ. 30:

Ծանօթ. Արևմտահան Ակիզեցին Զ. (589 թ.) դարի վերջերն սկսեց քարոզել՝ Հոգին սուրբ բղխումն ի Հօրէ և յՈրդւոյ. այս վարդապետութիւնը Թ. (885 թ.) դարի սկզբներից հաստատապէս ընդունեց կաթոլիկ եկեղեցին: Յիսուսի ասածը՝ «Յորժամ եկեցէ Նա Հոգին ձմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն ձմարտութեամբ... Նա զիս փառաւորեսցէ, զի լիմսի անտի առնուցու և պատմեսցէ ձեզ»: Յով. Ժ. 13, 14՝ այսպէս է մեկնում արեմբտեան եկեղեցին—լիմսի անտի առնուցու—իմ էութիւնից կըստանայ, ինձնից բղխում է, որ սիսալ մեկնութիւն է. այլ նշանակում է, թէ նոր գաստիարակը ձմարտութեան Հոգին մի նոր բան չի քարոզել, որ Քրիստոսի վարդապետութիւնից ջոկ բան լինի, այլ հաւատացեալներին կը բացարի, կը հասկացնի Քրիստոսի քարոզները:

Թէպէտ հին կտակարանի մէջ Աստծու միութիւնը պարզապէս վկայուած է, բայց այդ աստուածալին միութեան մէջ ամենասուրբ Երրորդութեան երեք անձանց գոյութիւնը լուսաբանած չէ, այլ աստուածալին գործողութիւնների մասին խօսելիս լոգնականաբար է խօսում: «Արասցուք մարդ ըստ պատկերի մերում». Ծննդ. Ա. 26: «Եկալիք իջուք և խառնակեսցուք անդ զլեզուս նոցա» Ժ. 7: «Ես լնդ ձեզ եմ, ասէ Տէր ամենակալ, և Բանն, զոր ուխտեցի լնդ ձեզ... և Հոգին իմ, որ կայ ի միջի ձերում». Անգիտ. Բ. 5—6:

Հին կտակարանի մէջ պարզապէս լուսաբանած չէ երեք անձանց գոյութիւնը նորա համար, որ խստասիրտ և դէպի բազմաստուածութիւնը ձգտումն ունեցող խրախաւոց ազգին հեռու պահպանէ բազմաստուածութեան բազմափարից:

2018-2020



Սակայն նոր կտակարանի մէջ պարզապէս ասուած է երեք անձանց գոյութիւնը մի Աստուածութեան մէջ, օրինակ, երբ Յիսուս Յորդանան գետում մկրտուեց և դուրս էր գալիս, այն ժամանակ Հոգին սուրբ տղաւնակերպ իջաւ Նորա վերայ, իսկ Հօր ձախը լսվում էր՝ «Դա է որդի իմ սիրելի, դմա լուարնւք». Մատթ. ֆէ. 5. ուրեմն Որդին մկրտվում էր, Հոգին իջնում էր աղաւնակերպ, Հայրը վկայում էր: Սուրբ Երրորդութեան խորհուրդը նոյնպէս յայտնուեց Քրիստոսի Պալծառակերպութեան ժամանակ: Քրիստոս իւր աշակերտներին պատուիրեց՝ «Գնացէք այսուհետեւ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Արդւոյ և Հոգւոյն սրբոյ». Մատթ. Ի. 19—20:

### Ա.ՍՏՈՒ.ԾԱ.ՑԻ. ԿԱ.ՏԱ.ԲԵԼՈՒԹԻՒՆՔ ԿԱ.ՄԱ.ՏՈՒ.ԳԵԼԻՔ

Սուրբ Գիրքն ուսուցանում է մեզ Աստծու կատարելութիւնները, որք են՝ Արարիչ, Ամենակալ, Ամենակարող, Անեղինքնագոյ, Հոգի, Յաւիտենական, Անփոփոխ, Ամենուրեք, Ամենագէտ, Ամենատես, Ամենասուրբ, Ամենաբարի, Ամենիմաստ:

Այս կատարելութիւններից հանգանակի մէջ յիշուած են Արարիչ և Ամենակալ խօսքերը՝ «Հաւտտամք... ի Հոյըն ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի», որովհետեւ այդ երկու կատարելութիւնների մէջ պարունակվում են և միւս մնացեալներն, օրինակ, խոստովանելով, թէ Աստուած Արարիչ է և Ամենակալ, խոստովանում ենք, որ Նա է Անեղինքնագոյ, որովհետեւ արարածն արարածների պատճառ չէ կարող լինել:

Խոստովանելով, որ Աստուած Անեղինքնագոյ է, խոստովանում ենք, որ Նա է Յաւիտենական, որովհետեւ սկիզբն չունեցողը՝ վախճան էլ չէ կարող ունենալ:

Խոստովանելով, որ Աստուած Յաւիտենական է, խոստովանում ենք, որ Նա է Անփոփոխ, որովհետեւ թէ բնութեամբ և թէ գոյութեամբ Նա երեք չէ փոփոխվում:

Խոստովանելով, թէ Աստուած անփոփոխ և յաւիտենական է, խոստովանում ենք, որ Նա ամենապարզ Հոգի է, որովհետեւ անփոփոխ և յաւիտենական կարող է լինել այն էակը միայն, որ նիւթից չէ բաղկացած: Քրիստոս ասում է՝ «Հոգի է Աստուած և երկրագուաց Նորա Հոգւով և ճըշմատութեամբ պարտ է երկրպագաներ». Յով. Դ. 24:

Խոստովանելով, թէ Աստուած ամենապարզ Հոգի է, խոստովանում ենք, որ Նա է Ամենուրեք, որովհետեւ Նա ամենատան տեղ է իւր աստուածալին զօրութեամբ, և եթէ Աստուած ամենուրեք է, ապա ուրեմն Ամենագէտ և Ամենատես է:

Աստուած Ամենիմաստ է, որովհետեւ անհուն իմաստութեամբ մարդուն ուղղում է դէպի բարին և ամբողջ տիեզերքը կառավարում է իմաստուն ճարտարապետութեամբ:

Աստուած Ամենաբարի է, որովհետեւ իւր բարիքը պարգևում է բոլոր արարածներին իւրաքանչիւրին օգուտ բերելու յարմար միջոցներով, ինչպէս Յովհաննէս առաքեալը գրում է՝ «Ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք ի վերուստ են իշեալք առ ի Հօրէ լուսոր». Յով. Ո. 17:

Աստուած Ամենասուրբ է, որովհետեւ Նա հեռու է ամենատան չարիքներից և սիրում է տեսնել մտրդոց մէջ արդարութիւն, սրբութիւն:

Աստուած Արդար է, որովհետեւ Նա մեզ տուել է արդար և բարենպատակ օրէնքներ, որոնց կատարումն ամենալն ճշմարտութեամբ պահանջելով, արդարութեամբ վարձատրում է օրինակատարներին և պատժում օրինազանցներին:

Աստուած սուրբ Գրքի մէջ անուանվում է Գիտած, Ողորմած, Երկայնամիտ և Բազումոզորմ, որովհետեւ Նա՝ իւր բարիքները մեղաւորներին տալով, սպասում է նոցա դարձին և՝ ներելով յանցանքները, մօտեցնում է իրեն:

Աբ. գրքի մէջ Աստծուն վերագրած են նոյնպէս մարդու զգալարանքներն, օրինակ, Ա.ջ տեառն, Ա.կն տեառն, Ա.կանջ տեառն և այլն, որով մարդոց հասկացնում են Աստծու ամենագօրութիւնը, ամենուրեքութիւնը, ամենագիտութիւնը:

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԸՌԱՋԻՆ ԱՆՁՆ  
ՀԱՅՐ Ա.ՍՏՈՒԱԾ

Ա. Բ. Ա. Չ. Ա. Գ. Ա. Շ. Ա. Խ. Ի. Ի. Ի. Ն.

«Հաւատամբ... ի Հայրն ամենակալ, յԱրարին Երկնի  
եւ Երկրի, Երեւելեաց եւ աներեւոյթից».

Այս խօսքերով դաւանում ենք և խոստովանում, թէ  
Ամենասուրբ Երրորդութեան անձներից մինը, որ որոշվում է  
Հայր անունով, իւր ամենակարող Բանիւ և սուրբ Հոգւով  
ոչնչից ստեղծեց բոլոր Երկնաւոր և Երկրաւոր, Երևելի և  
աներեւոյթ արարածներն, ինչպէս որ սուրբ Գիրքը վկայում  
է՝ «Ի սկզբանէ արար Աստուած գերկին և գերկիր, և Եր-  
կիր էր աներեւոյթ և անպատճաստ և խաւար ի վերալ ան-  
դնդոց, և Հոգի Աստուծոյ շրջէր ի վերալ ջրոց». Ծննդ. Ա. 1:  
«Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աս-  
տուած էր Բանն. Նա էր ի սկզբանէ առ Աստուած. ամենայն  
ինչ նովաւ եղն, և առանց նորա եղև և ոչինչ». Յով. Ա. 1:

«Ողորմութեամբ Տետոն լի եղեւ Երկիր և Բանիւ Տետոն  
Երկինք Հաստատեցոն և Հոգւով բերանոյ նորա ամենայն  
զօրութիւնք նոցա». Ստղ. Լ.Բ. 6:

Աներեւոյթ արարածները Հրեշտակներն են և մարդոց  
Հոգիքը: Հրեշտակներն անմարմին, անմահ Հոգիներ են և  
ստեղծուած են Արարչին սպասաւորելու Համար:

Հրեշտակները բաժանվում են բարի և չտր: Բարի  
անուանվում են այն Հրեշտակնարը, որոնք անփոփոխ մնա-  
ցին Աստծուն Հնազանդ. սոքա բազմաթիւ են և բաժան-  
վում են ինն դասերի՝ Սերովեէք, Քերովեէք, Աթոռք, Իշ-  
խանութիւնք, Պետութիւնք, Զօրութիւնք, Տէրութիւնք,  
Հրեշտակք և Հրեշտակապետք:

Զար Հրեշտակներ—սատանաներ, գեեր և չար ոգիներ՝  
նոքա են, որոնք իւրեանց ամբարտաւանութեամբ Աստծու  
դէմ մեղանչելով՝ կորցրին իւրեանց Երջանկութիւնն և դա-  
տապարտուեցան յաւիտենական պատժի:

Երեելիքն աշխարհն է, իւր զանազան տեսակ նիւթա-  
կան գոյացութիւններով, որ Աստուած ոչնչից ստեղծեց  
վեց օրում՝

Ա.ո.աջին օրն ստեղծեց լոյսը:

Երկրորդ օրը՝ Հաստատութիւնը (օդ):

Երրորդ օրը՝ ջուրը ցամաքից բաժանեց և Հրամայեց,  
որ ցամաքի վերալ աճեն բոյսեր:

Չորրորդ օրն՝ Երկնային մարմիններն՝ արեգակը, լու-  
սինն և աստղերը:

Հինգերորդ օրն՝ օդում թռչուններն և ջրում ձկները:  
Վեցերորդ օրը՝ բոլոր չորքոտանի կենդանիններն և  
տպա մարդը:

Նիւթական աշխարհի բոլոր գոյութիւններից, գերա-  
գոյնն է մարդն, որովհետեւ Աստուած մարդուն տուել է  
Հոգի և բանականութիւն մտածելու, խորհելու, դատելու  
և զարդարել է նորան Եւր պատկերով, որ Հոգւոյ անմահու-  
թիւն է. սրբութիւն է:

Թէև մարդու պատուիրանացութեամբ ազօտացաւ  
ալդ աստուածային պատկերը, սակայն Եւր Միածին Որդու  
միջոցով նորսեց նոյնն և հարթեց մարդու առաջ փրկութեան  
ճանապարհը, որ տանում է գէպի յաւիտենական կեանքը, որի  
Համար և ստեղծել էր: Պողոս առաքեալն ասում է՝ «Ալլ  
Աստուած, որ մեծն է ողորմութեամբ վասն բազում սիրոյ  
իւրոյ, զոր սիրեաց զմեզ, մինչդեռ մեռեալք էաք ի մեզս,  
կենդանիս արար զմեզ ի Յիսուս Քրիստոս». Եփես. Բ. 4:

«Որպէս Ադամաւն ամենեքեան մեռանին, նոյնպէս և  
Քրիստոսիւ ամենեքեան կենդանասցին». ա. Կորնթ. ԺԵ. 22:

Ա.ՍՏՈՒԱԾԱ.ՅԻՆ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆ

Ա.ստուած՝ աշխարհը ոչնչից վեց օրում ստեղծելով ու  
տեսնելով որ ամեն ինչ բարի է, եօթներորդ օրը Հանգստա-  
ցաւ, ալսինքն ալլես բան չստեղծեց, սակայն իւր ստեղ-  
ծածն անխնամ չը թողեց, Նա սկսեց իւր ստեղծածը պահ-

պանել, խնամել՝ Քրիստոս ասում է՝ «Հայր իմ մինչև ցալմ  
գործ և Ես գործեմ». Յով. Ե. 17: «Նա տայ ամենայնի  
կեանս և շունչ և զամենայն ինչ. զի նովաւ կեամք և շար-  
ժիմք և եմք». Գործք. Ժ. 25, 28:

Այսպէս՝ Աստուած իւր նախախնամութեամբ, որ է  
նորա ամենակարող, ամենիմաստ և բարի ներգործող գորու-  
թիւնը, կառավարում է և պահպանում բոլոր արարածնե-  
րին, հոգալով նոցա ամեն պիտոյքն, և անխտրաբար խնա-  
մում երկրս վերայ թէ արդարներին և թէ մեղաւորներին։  
Այսպիսի նախախնամութեամբ Աստուած կառավարում  
է և պահպանում իւր եկեղեցին և պիտի պահպանի յաւի-  
տեանս։ Եթէ հին և նոր եկեղեցին՝ այնքան հալածանքնե-  
րին և գժուարութիւններին տանելով, մինչև այսօր պահ-  
պանել է իւր գոյութիւնը, այդ անհերքելի ապացոյց է  
Աստծու յատուկ նախախնամութեան։ Քրիստոս ասում է՝  
«Ես ընդ ձեզ եմ զամենայն տւուրս մինչև ի կատարած  
աշխարհ»։ Մատթ. Ի. 20:

## ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԸՆՉՆ

### ՈՐԴԻՆ ԱՍՏՈՒԱԾ

«Հաւատամք եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈւրին  
Ասուծոյ, ծնեալն յԱսուծոյ Հօրէ Միածին՝ այսինքն  
յէռիքին Հօր. Ասուած յԱսուծոյ, լոյս ի լուսոյ, Աս-  
ուած համարիս յԱսուծոյ համարէ՝ ծնունդ եւ ո՛չ արա-  
րած. Եոյն իմբն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ  
եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյք»։

Այս գաւանութեամբ խոստովանում ենք, որ մեր միակ  
Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոս Ամենասուրբ Երրորդութեան  
երկրորդ անձն՝ Աստծու Որդին է. որ յաւիտենից առաջ  
Հօրից ծնուած է, նա Միածին է և չկոյ ուրիշ մէկը նորա  
նմտն. այսինքն Հօր և սուրբ Հոգւոյս Ետկից, արարչակից,  
համարուն, համագօր է, նա ինչպէս լոյսը

լուսից, ճշմարիտ Աստուած ճշմարիտ Աստծուց յաւիտենից  
առաջ ծնուած է և ո՛չ արարած – ստեղծուած է. և ամե-  
նայն ինչ նորանով է եղել։

«Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկու-  
թեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ  
կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգուվն  
սրբով. որով էաւ զմարմին, զնոզի եւ զմիս եւ զամե-  
նայն որ ինչ է ի մարդ, համարտապէս եւ ո՛չ կարծեօֆ»։

Խոստովանում ենք, թէ Որդին Աստուած Հօր և սուրբ  
Հոգու կամքով մարդացաւ, ճշմարտապէս մարդկալին մար-  
մին և բնութիւն առաւ սուրբ կոյս Մարիամից։ Եւ որով-  
հետեւ սուրբ կոյս Մարիամը Յուգալի ցեղիցն և Պաւթի  
ազգիցն էր, այս պատճառով էլ Աստուած՝ և Աստծու  
Որդին, որ եղաւ մարդ, անուանուեց Որդի Աստծու և որդի  
մարդոյ։ «Ահա կոյս յղացի և ծնցի որդի և կոչեսցեն զա-  
նուն նորա Յիսուս, զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մե-  
ղաց իւրեանց»։ Մատթ. Ա. 14:

«Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ և զօրութիւն բարձրելոյն  
հովանի լիցի ի վերայ քո»։ Ղուկ. Ա. 35։

Խոստովանում ենք, թէ Որդին Աստուած, աւետարեր  
հրեշտակի խօսքի համաձայն՝ անուանուեց Յիսուս, որ է  
Փրկիչ, մարդկալին ազգը մեղքից և մահուան դատապար-  
տութիւնից փրկելու համար՝ «Ծնցի որդի, և կոչեսցեն զա-  
նուն նորա Յիսուս, զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մե-  
ղաց իւրեանց»։ Մատթ. Ա. 21:

Յիսուս անուանվում է և Քրիստոս՝ Մեսսիա, որ նշա-  
նակում է Օծեալ. նախ՝ որովհետեւ տեսնում էին նորա  
վերալ այն բոլոր զործերն և կատարելութիւններն, որոնք  
գուշակել էին մարդարէները Մեսսիալի մասին, որին սպա-  
սում էին անհամբերութեամբ։

Երկրորդ՝ նորա համար, որ Յիսուս կատարեց իւր կեանքի  
մէջ մարդարէի, քահանայի և թագաւորի պաշտօնն, որոնք  
երայական եկեղեցու օրէնքի համաձայն օծվում էին իւղով.  
իսկ Յիսուս յաւիտենից օծեալ էր սուրբ Ղոգւց։

Յիսուս մարդարէի պաշտօնն աւելի գերազանցութեամբ կատարեց, քան թէ միւս մարդարէները, որովհետեւ նա ուսուցանում էր մարդոց Աստծու կամքը, ցոյց էր տալիս մարդոց բարոյականութեան փրկարար ճանապարհը. Նա քարոզում էր, որ Աստուած ամեն մինին իւր գործի համեմատ կը հատուցանէ. Նա աստուածային հրաշքներով ապացուցանում էր, որ ինքն Աստծու առաքեալ է՝ «Եթէ ոչ գործեմ զգործս Հօր իմոյ, մի հաւատալք ինձ». Յով. ֆ. 37:

Յիսուս կատարեց քահանալի պաշտօնն աւելի գերազանցութեամբ, քան Ահարոնեան քահանաներն, որովհետեւ նա աստուածաբար թողնում էր մարդոց իւրեանց մեղքերը: Նա իւր կեանքը պատարագեց մարդոց փրկութեան համար սուրբ խաչի սեղանի վերայ. Նա եղաւ նոր ուխտի միջնորդ Աստծու և մարդոց մէջ. Նա երկնքում միշտ բարեխօս է Հօր մօտ մեր մեղքերի թողութեան համար:

Յիսուս ոչ թէ երկրաւոր թագաւոր էր, ինչպէս հրէաները կարծում էին, այլ հոգեւոր և երկնաւոր թագաւոր է բոլոր տիեզերքի, մանաւանդ իւր եկեղեցու, որի հետ յաւիտեան լինել խոստացաւ, և խնամում է ու պահպանում նորան՝ «Իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ». Յով. ֆ. 36:

«Եւ տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի Հօր նորա և թագաւորեսցէ ի վերալ տանն Յակովալ յաւիտեան, և թագաւորութեան նորա վախճան մի լիցի». Դուկ. Ա. 31—34:

«Ես ընդ ձեզ եմ զամենալն աւուրս մինչև ի կատարած աշխարհի». Մատթ. Ի. 20:

Մանօր. Հայաստանեայց եկեղեցին դաւանում է, որ Աստծու Որդին, որ սուրբ կոյս Մարիամից առնելով մարդկային բնութիւնն և միացնելով իւր աստուածային անձի և բնութեան հետ՝ եղաւ կատարեալ մարդ հոգւով, մտքով և մարմնով, կատարեալ Աստուածութեամբ. մի անձն, մի դէմ և միաւորեալ մի բնութիւն երկու բնութիւնից՝ անշփոթ և անբաժան միաւորուած միմնանց հետ մէկ անձի—Քրիստոսի մէջ:

«Զարչարեալ, խաչեալ, բաղեալ».

Այս դաւանութեամբ նախ խոստովանում ենք, թէ

Յիսուս իւր ճշմարիտ վարդապետութիւնը մարդոց ուսուցանելուց յետոյ, ամենասուրբ Երրորդութեան նախասահման տնօրէնութեան համաձայն, կամեցաւ իւր անձը զոհաբերել մարդկային ազգի փրկութեան համար. ուստի կամաւորապէս յանձն առաւ չարչարուել իւր վարդապետութեան հակառակորդներից և, ի լրումն ամեն տեսակ անարդական չարչարանքների՝ բարձրանալ խաչի վերայ՝ մարդկանց մեղքի և մահի դատապարտութիւնից ազատելու համար:

Երկրորդ՝ խոստովանում ենք, թէ Յիսուս խաչի վերայ ճշմարտապէս մեռաւ և թաղուեց գերեզմանում: Նա իւր անպարտական մահով ջնջեց մեր հակառակութեան կամ թշնամութեան ձեռագիրը. «Զնջեաց զձեռագիր մերոյ հակառակութեանն հրամանօք իւրովք, որ կալր մեզ հակառակ՝ եբարձ զայն ի մէջոյ և բևեռեաց ընդ խաչափատին». Պողոս. Բ. 14: Նա մեզ հաշտեցերեց Հայր Աստծու հետ և ազատեց յաւիտենական դատապարտութիւնից—Ադամայ մեղքից:

«Երրորդ աւուր յարուցեալ».

Այս խօսքերով խոստովանում ենք, թէ Յիսուս իւր և ուրիշ շատ մարդարէների գուշակութիւնների համաձայն՝ իւր թաղման երրորդ օրը յարութիւն առաւ: Նա իւր յարութեամբ հաստատեց մեր ապագալ յարութիւնն և յաւիտենական կենաց յոյսը՝ «Եղե պտուղ և անդրանիկ ամենալն ննջեցելոց... և ետ յոյս հաստատութեան վերստին նորոգման կենդանութեան ամենալն մարդկան».—Ճամագիրք:

«Ելեալ ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր».

Այս դաւանութեամբ խոստովանում ենք, թէ Յիսուս իւր յարութիւնից յետոյ՝ յաճախ երկում էր իւր աշակերտներին և խօսում էր նոցա հետ Աստծու արքայութեան մասին. Նա նրանց տալիս էր պատուէրներ և խոստացաւ

ուղարկել սուբբ Հոգին նրանց զօրացնելու և մխիթարելու համար։ Եւ ապա Յիսուս քառասներորդ օրը Զիթենեաց սարի վերայ իւր աշակերտներին օրհնելով՝ համբարձուեց երկինքն և Հօր աջ կողմը նստաւ, այսինքն Յիսուս՝ հայրական բոլոր տնօրէնութիւնները կատարելով, նոյն մարմնովն երկինքը վերացաւ և աստուածալին փառքը մտաւ, որ յաւետենից Հօրից ունէր՝ «Ոչ զնոյնս պարտ էր չարչարիլ Քրիստոսի և մտանել ի փառա իւր»։ Ղուկ. ԻՊ. 26։

Մանօք. Տնօրէնութիւններն ասելով պէտք է հասկանալ Քրիստոսի մարդկութիւն խորհուրդներն. այսինքն Նորա Յղութիւնը, Ծնունդը, Մկրտութիւնը, Քարոզութիւնը, Հրաշագործութիւնը, Զարչարանքը, Մահը, Յարութիւնը, Համբարձումն և Հօր աջ կողմը նստելը։

«Գայոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զիենդանիս եւ զմեռեալս, որոյ քազաւորութեան ոչ զոյ վախճան»։

Այս խօսքերով դաւանում ենք, թէ Յիսուս նոյն մարդկային մարմնով և Հօր փառքով կրկին գալու է աշխարհ կենդանիներին և մեռածներին արդարապէս դատելու՝ մեղաւորներին յաւիտենական պատիժ, արդարներին յաւիտենական երջանկութիւն յատկացնելու և ամենքի վերայ յաւիտենական թագաւորելու։ «Եւ յորժամ եկեսցէ Որդի մարդոյ փառօք իւրովք և ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց։ և ժողովեսցին առաջի Նորա ամենայն ազգք ևալն»։ Մատթ. ԻԵ. 31—32։

## Ա.ՍՏՈՒԱ.ԾՈՐԴՈՒ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ ԴԵՄ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ա. Աստուածորդու մարդկութեան դէմ եղած մոլորութիւններից առաջինն է հրէից ազգի մոլորութիւնը, որ Յիսուսին ակնկալեալ Մեսսիան չհամարելով՝ դեռևս սպասում է նոր Մեսսիայի դալանեանն. այն ինչ ակնկալեալ Մեսսիայի վերաբերութեամբ մարդարէների բոլոր գուշակութիւնները բառ առ բառ, կետ առ կետ անթերի կատարուել են Յիսուս Քրիստոսով, որովհետև նախ-

Մեսսիան պէտք է զար Զօրաբարէլի շինած տաճարն և, Անգեայ ու Մաղաքիա մարդարէների գուշակածին համաձայն՝ այնտեղ պիտի քարոզէր ողոց խաղաղութիւն. այն ինչ Զօրաբարէլի տաճարն ահա 19 դար է, որ կործանուել է նորա մէջ եղած զոհերը, պատարագները, սրբութիւնն ու աեղանները, որոնք ճշմարիտ Մեսսիայով կատարուելիք քաւութեան և փրկադործութեան ստուերական նմանութիւններն էին՝ բարձուել են։

Երկրորդ՝ Դանիէլ մարդարէի գուշակած 490 տարի ժամանակամիջոցը, տաճարի նորոգութիւնից հաշուելով՝ լրանալուն պէտք ծնաւ Մեսսիան։

Եւ երրորդ՝ Մեսսիան պիտի զար Յուդայի ցեղից և Յուդայի քաղաքական իշխանութիւնը դեռ չկրծացած, այն ինչ 1910 տարի է անցել, որ Յուդայի քաղաքական իշխանութիւնը վերջացել է Հերովդէսով. և հրէից դեռ ևս ակնկալեալ Մեսսիայի Յուդայի շառաւիդից լինել այսուհետև հաստատել կամ ապացուցանել անկարելի է, որովհետև տաճարի հետ այրուեցան և անհետացան բոլոր արձանագրական մատեանները, որոնցով կարելի կը լինէր հաստատել և գաւերացնել նոր ծնուելի Մեսսիայի Յուդայի ցեղից լինելը։

բ. Երկրորդ հերետիկոսն Ասուածորդու մարդկութեան դէմ եղաւ Աղէքսանդրացի Արիոս յոյն երէցն, որ Յիսուսին Աստուծ և Որդի Աստծու չէր դաւանում և ոչ հաւասար և համարդյակից Հօր և սուրբ Հոգուն, այլ օտար ոմն և արարած՝ բոլոր արարածներից բարձր կատարելութիւններով, բայց ոչ Աստուծ և արարիչ։ Արիոսը հիմնվում էր Յիսուսի հետեւեալ խօսքի վերայ՝ «Հայր իմ մեծ է քան զիս», այն ինչ այս խօսքը վերաբերվում է Յիսուսի մարդկային խոնարհ վիճակին և բնութեանը։

Այս մոլորութիւնը գատապարտեց Նիկիայ Տիեզերական սուրբ ժողովը 325 թ. Մայիսի 20-ին, որին Հայաստանեայց եկեղեցու կողմից ներկայ էր սուրբ Արիոստակէս հայրապետը սուրբ Լուսաւորչի հաւանութեամբ։ Ժողովը սահմանեց դաւանել Յիսուսին ճշմարիտ Աստուծ և Որդի Աստծու համարդյակից և համարուն Հօր և սուրբ Հոգուն։ Այս ժողովում խմբագրուեց հաւատի հանգանակը։

գ. Երրորդ հերետիկոսն եղաւ կոստանդինապօլսի յունաց Նեստոր պատրիարքը, որ ուրանում էր Յիսուս Քրիստոսի իսկապէս Աստծու Որդի և մարդոյ որդի լինելը, և չէր խոստովանում թէ Յիսուս է ճշմարիտ Աստուծ և Որդի Աստծու, Յիսուսի մարդկային մարմնը Նորա աստուածութեան բնակարան էր քարոզում, իսկ ո. կոյս Մարիամին դաւանում էր Մարդածին և ոչ Աստուածածին։

Այս մոլորութիւնը դատապարտեց Եփեսոսի Տիեզերական սուրբ ժողովը 431 թ. Յունիսի 22-ին, որտեղ ժողովուած էին 200 հայրապետ:

Ժողովը նգովեց Նեստորին ու նորա աղանդն և խոստովանեց Յիսուս Քրիստոս մի Որդի Աստծու, իսկ սուրբ Կոյս Մարիամին՝ Աստուածածին:

## ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՆՁՆ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

«Հաւատամի՛ եւ ի սուրբ Հոգին, յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յաւեսարանս. որ էջն ի Յորդանան, քարոզեաց զԱռաքեալն եւ բնակեցաւ ի սուրբսն».

Այս դաւանութեամբ մենք խոստովանում ենք, նախ՝ թէ սուրբ Հոգին ամենասուրբ Երրորդութեան երեք անձերից մինն է անժամանակապէս և անձառապէս Հօրից բղխեալ կամ ելեալ՝ «Երեք են, որք վկայեն յերկինս՝ Հայր, Բան և Հոգին սուրբ, և սոքա երեքինս մի են». ա. Յովհ. 6—7: «Բայց յորժամ եկեսցէ միսիթարիչն՝ զոր ես առաքեցից ձեզ ի Հօրէ՝ զՀոգին ճշմարտութեան, որ ի Հօրէ ելանէ, նա վկայեսցէ վասն իմ». Յովհ. ԺԵ. 26:

Երկրորդ՝ սուրբ Հոգու Անեղ և Կատարեալ ստորոգելիները տալով, խոստովանում ենք, թէ սուրբ Հոգին Հօր և Որդու նման կատարեալ Աստուած է:

Երրորդ՝ խոստովանում ենք, թէ Հոգին սուրբ ունի այն ամեն կատարելութիւններն, ինչ որ ունին Հայր և Որդի. Նա արարչակից, գործակից է Հօր և Որդու. Նա ամենազէտ է և ալլ... «Հոգի Աստուածոյ շըջէր ի վերայ ջրոց». Ծննդ. Ա. 2:

Չորրորդ՝ խոստովանում ենք, թէ սուրբ Հոգին ներշնչեց մարգարէներին և առաքեալներին բերանացի կամ գրաւոր աստուածալին յալտնութիւններն և սուրբ Աւետարանը մարգոց ուսուցանելու համար:

Հինգերորդ՝ խոստովանում ենք, թէ մարգարէներն և առաքեալները՝ սուրբ Հոգու ներշնչմամբ ու շնորհքով զօրացած՝ կարողացան հրաշագործել և զանազան լեզուներով խօսել, որով ապացուցին, թէ իւրեանց առաքելութիւնն Աստծուց է և ուսումն երկնային՝ «Քանզի ոչ եթէ ըստ կամաց մարգկան տուաւ մարգարէութիւն երբէք, այլ ի Հոգուոյն սրբոյ կրեալք՝ խօսեցան մարգիկք յԱստուծոյ». Պետր. 11. Ա. 21:

Վեցերորդ՝ խոստովանում ենք, թէ սուրբ Հոգին՝ աղաւնու նման իջնելով Յորդանանում մկրտուող Յիսուսի վերայ, վկայեց նորա Աստուածորդի լինելը. «Եւ ահա բացան նմա երկինք, և ետես զՀոգին Աստուծոյ. զի իջանէր իբրև դաղաւնի և գայլը ի վերայ նորա և ահա ձայն յերկնից, որ ասէր, գա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցար». Մատթ. Գ. 17:

## ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՍՏՈՒԱ.- ԾՈՒԹԵԱՆ ԴԵՄ

Մանօթ. Սուրբ Հոգու Աստուածութեան դէմ մոլորութիւն յայտնեց Կոստանդինապոլսի յունաց պատրիարք, հոգեմարտն Մակեդոն, որ սուրբ Հոգու Աստուածութիւնն և նորա կատարեալ անձնաւորութիւնն ուրանում էր, ինչպէս որ Սրիոս ուրացաւ Որդու Աստուածութիւնն և մշտնջնաւորութիւնն Հօր հետ և քարոզում էր թէ՝ Հոգին սուրբ նոցա էութիւնից օտար է և լոկ պաշտօնեայ նոցա:

Սորա մոլորութիւնը դատապարտեց Կոստանդինապոլսի Տիեզերական սուրբ ժողովն 150 հայրապետներից բազկացած, որ 381 թ. Մայիսին Մեծն թէսու կայսեր հրամանով կայացաւ: Այս ժողովին մեր եկեղեցու կողմից ներկայ էր Մեծն Ներսէս հայրապետ: Ժողովը սահմանեց դաւանել Հոգին սուրբ համագոյակից Հօր և Որդուն ու հաւասար նոցա երկրպագելի:

## ՇՆՈՐՀԱԲԱՆՆ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

Ենորհք անուանվում են այն ամեն ներքին և արտա-

քին բարիքները, որ պարզեցել է և պարզեռւմ է Աստուած հաւատացեալներին:

Ենորհքն երկու կարգի է բաժանվում ա) գերբնական և բ) սովորական:

Գերբնական շնորհքներն անուանվում են մարդարէութիւնները և հրաշագործութիւններ, որ Աստուած հին ուխտի մէջ պարզեռւմ էր մարդարէ անունով ընտրուած սուրբ մարդոց, որոնք պէտք է ներկայում ապագայի մէջ լինելիքը գուշակէին և խօսքով ու հրաշագործութեամբ ժողովրդին դէպի ճշմարիտ աստուածպաշտութիւնը հրաւիրէին: Իսկ նոր ուխտի մէջ նոյն շնորհքներն Աստուած պարզեց սռաքեալներին և նոցա հետևողներին, որպէս զի կարողանան խաւարի իշխանութեանն յաղթելով՝ քրիստոնէական ճշմարտութեան լոյսն ընդհանուր մարդկութեան մէջ տարածել:

Ենորհքը բաշխում է ամենասուրբ Երրորդութիւնն, որ մատակարարվում է սուրբ Հոգու միջոցով:

Սովորական շնորհքները սուրբ Հոգին բաշխում է, նախ՝ նոցա, որոնք արժանապէս ընդունում են եկեղեցու սուրբ խորհուրդներն. Երկրորդ՝ նոցա, որոնք հեղութեամբ և ազօթքով դիմում են նորան և երրորդ՝ նոցա, որոնք ընդունած շնորհքներն արդիւնաւորում են:

«Զքաղցեալս լցոյց բարութեամբ և զմեծատունս արձակեաց ունայնս». Ղուկ. Ա. 53:

«Որ գուցէ տացի նմա և յոււելցի և ոլրն ոչ գուցէ և զոր ունիցի բարձցի ի նմանէ». Մատթ. Ժ. 12:

Սովորական շնորհքներն, որ սուրբ Հոգին մարդոց բաշխում է, սոքա են՝ «Հաւատ, Յոյս, Սէր, Համբերութիւն, Զօրութիւն և Աստուածպաշտուական եռանդն, առանց որոնց չենք կարող կատարել Յիսուսի պատուիրաններն և փրկութեան հասնել, որովհետեւ մարդս միշտ դէպի չարն է հակամէտ»:

ԵԿԵՂԵՑԻ

«Հաւատամբ եւ ի մի միայն ընդհանրական եւ առավելական եկեղեցի»

Եկեղեցի բառը յունարէն է քլիսիա, նշանակում է Քրիստոսի հաւատացողների ժողով, որոնք մի հաւատով, մի յուսով և մի սիրով հաւատում են աստուածալին ճշմարտութիւններին, որով և միացած են միմեանց հետ՝ հոգեոր և բարոյական միութեամբ:

Եկեղեցին իւր սկիզբն ունի նախամարդոց ժամանակներից, որոնք առաջին անգամ պաշտեցին Աստծուն և հաստատուն յոյս ունեցան խոստացեալ Մեսսիալի փրկութեանը:

Եկեղեցու նպատակը միշտ եղել է մի և անփոփսի, սակայն զանազան ժամանակներում զանազան տեսակ տընտեսութեան կամ կառավարութեան ձև ստանալով, ստացել է և զանազան անուններ, օրինակ՝ նախամարդոց ժամանակից մինչև նոյն հահապետն անուանվում է նախնի եկեղեցի, նոյնից մինչև Աքրահամ և Յակով՝ նահապետական. Յակովի հսրալէլ անուանուելուց յետոյ մինչև Մովսէս մարդարէն՝ իսրալէլեան:

Նախնի, նահապետական և իսրայէլեան եկեղեցիները Մեսսիալի փրկութեան ակնկալութիւնը պահպանում էին բերանացի աւանդութեամբ, բայց երբ Մովսէս տուեց իսրայէլեան եկեղեցուն գրաւոր ծններ, արարողութիւններ և դատաստանական օրէնքներ, որոնք Յիսուսով կատարուելիք փրկարգործութեան ստուերական օրինակներն էին, այն ժամանակից Մեսսիալի գալստեան ակնկալութիւնը պահպանուեց գրաւոր և եկեղեցին անուանուեց Մովսիսական կամ ընդօրինական մինչև Յիսուսի ծննունդն, որ հաստատեց մարդկարին հոգիների փրկարգործութիւնը, քրիստոնէական եկեղեցու հիմքը գնելով:

Քրիստոնէական եկեղեցին բաժանվում է Երկուսի, նախ՝ անդրանկաց կամ յաղթանակող եկեղեցի, որ է սուրբ հրեշտակների և հանգուցեալ սրբերի ժողովն՝ Երկնքի կայա-

նում ինչպէս գրում է Պօղոս առաքեալն առ Եբրայեցիս՝ «Մատուցեալ էք... յեկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս և առ դատաւորն ամենեցուն Աստուած. և հոգիս արդարոց կատարելոց». ԺԲ. 23:

Երկրորդ՝ զինուորեալ եկեղեցի, որ են կենդանի հաւատացեալներ. զինուորեալ է ասվում նորա համար, որովհետեւ հաւատացեալները սպառազինեալ են սուրբ Հոգու զէնքով աշխարհի փորձութիւններին դիմադրելու և չարի դէմ պատերազմելու համար, ինչպէս որ գրում է Պօղոս առաքեալն առ Եփեսացիս՝ «Այսուհետև զօրացարուք Տերամբ... և գգեցարուք զսպառազինութիւն Աստուծոյ, զի կարողք լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանալի... վասն այնորիկ առէք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարողք լինիջիք ի դիմի հարկանել չարին յաւուրն չարութեան». Զ. 10—14:

Զինուորեալ եկեղեցին բաժանվում է՝ ա) ուսուցանող, որք են առաքեալներ, աւետարանիչներ, քահանաներ և վարդապետներ, ու բ) ուսանող, որ է հաւատացեալ ժողովուրդը:

Եկեղեցու պաշտօնէութիւնը սահմանեց ինքն Յիսուս, առաքելութեան իրաւունք տալով առաքեալներին և սոքա էլ իւրեանց յաջորդներին հետեւեալ խօսքերով՝ «Տուաւ ինձ ամենալն իշխանութիւն յերկինս և երկրի, որպէս առաքեաց զիս հալը, և ես առաքեմ զձեզ». Մատթ. ԻԵ. 19:

Յիսուս եկեղեցու պաշտօնեաներին յատկացրեց ուսուցանելու և մկրտելու պարտաւորութիւններն ասելով՝ «Դնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամենալն հեմանսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ուսուցէք նոցա պահել զամենալն, զոր ինչ պատուիրեցի ձեզ, և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենալն աւուրս մինչև ի կատարած աշխարհի». Մատթ. ԻԲ. 12—20. և նա իրաւունք տուեց մարդկանց մեղքերը թողնելու հետեւեալ խօսքերով՝ «Առէք զհոգին սուրբ, եթէ ումեք թողուցուք զմեզս՝ թողեալ լիցի նոցա, և եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի». Յօվհ. Ի. 22—23:

ՔՐԻՍՏՈՆԷԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՑԱՏ-  
ԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քրիստոնէական եկեղեցին ունի չորս լատկութիւն՝ Միութիւն, Սրբութիւն, Ընդհանրականութիւն և Առաքելականութիւն:

Եկեղեցին «մի» է ասվում նորա համար, որ ամեն հաւատացեալները՝ թէե ազգով, լեզուով, ծէսերով, արարողութիւններով և վարչական ձեւերով բաժանուած են միմեանցից, սակայն իբրև մի մարմին միացած են իւրեանց միակ գլխի՝ Քրիստոսի հետ մի հաւատով, մի յուսով և մի սիրով:

Եկեղեցին «սուրբ» է ասվում նախ՝ որովհետեւ ինչպէս որ իւր գլուխն արդար և անարատ է, այնպէս էլ սուրբ են նորա անդամները, որ Քրիստոսի բարոյական մարմինն են. Երկրորդ՝ որովհետեւ սրբուած են ամեն տեսակ մեղքերից մկրտութեան շնորհքով. Երկրորդ՝ որովհետեւ սրբութիւն է քարոզում և ազատ է անմաքուր, մոլար և սուտ վարդապետութիւններից. չորրորդ՝ որովհետեւ նորա մէջ կատարվում են քրիստոսագիր, սրբարար և շնորհաբաշխ իորհուրդները:

Եկեղեցին «ընդհանրական» կամ յունարէն «կաթողիկէ» է ասվում նախ՝ որովհետեւ քրիստոնէութիւնը բոլոր աշխարհիս մէջ տարածուած է և պիտի տարածուի մինչև աշխարհիս վերջը. Երկրորդ՝ նա դէպի իրան գիմող. ազգերին մկրտում, սրբում, միացնում իւր հետ և անխտիր սիրով լնդունում է իւր ծոցի մէջ:

Եկեղեցին «առաքելական» է տօվում, որովհետեւ Քրիստոսի քարոզած հաւատը հաստատուած է առաքեալների գլուածների և աւանդութիւնների վերաբ:

ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐՀՈՒՄԻՄՆԵՐԸ

«Հաւատամբ... ի մի մկրտութիւն, յապահիարութիւն, ի բաւութիւն եւ ի բողութիւն մեղաց». 5

Եկեղեցու խորհուրդներն այն ծէսերն ու արարողու-

թիւններն են անուանվում, որոնք եկեղեցու կարգաւոր պաշտօնեաների ձեռքով՝ որոշեալ նիւթով և ձեռվ մատակարարվում են հաւատացեալներին, որպէս զի վերջններս սուրբ Հոգու շնորհքն ստանան: Այս սուրբ արարողութիւնները կոչվում են խորհուրդ, որովհետև արարողութիւնները տեսանելի են, իսկ Աստծու շնորհքն անտեսանելի, աներեսիթ: Խորհուրդներն եօթն են՝ Մկրտութիւն, Դրոշմ, Ապաշխարութիւն, Հաղորդութիւն, Ամուսնութիւն, Կարգ կամ Զեռնադրութիւն և Օծումն կամ Այցելութիւն հիւանդաց:

### ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Մկրտութիւնն եկեղեցու սրբարար խորհուրդներից մինն է, որ հաստատեց Յիսուս հաւատացեալներին սկզբանական մեղքից մաքրելու և հոգի որ կեանք պարգևելու համար՝ «Մկրտեցէք զամենալն հեթանոսս յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ». Մատթ. 15. 20:

Մկրտութեան խորհրդի հական բանն է «... ծառայս Սստուծոյ մկրտի յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ»:

Մկրտութեան խորհուրդը կատարում են եկեղեցու կարգաւոր պաշտօնեաները: Նիւթն օրհնած ջուրն է, իսկ արտաքին ձևն այն է, որ երեխալին ջրի մէջ երեք անգամ ընկղմելով՝ մի անգամ ասում են՝ «... ծառայս Աստուծոյ մկրտի յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ»:

Երեք անգամ ընկղմելն օրինակ է Քրիստոսի մահուան, թաղման և յարութեան:

Հայաստանեալց եկեղեցին մկրտութիւնը համարում է անկրկնելի. սորա համար էլ հանգանակի մէջ դաւանում ենք՝ «հաւատամք ի մի մկրտութիւն»:

Ծանօթ. Կաթոլիկ եկեղեցու կարգաւոր պաշտօնեան մկրտութեան խորհուրդը կատարում է ոչ թէ մկրտուղին երեք անգամ սուրբ Երրորդութեան անունով ընկղմելով ջրի մէջ, այլ նորա վերայ երեք անգամ ջուր սրսկելով:

### ԳՐՈՂՄ

Գրողմն եկեղեցու սրբարար խորհուրդներից մինն է, որ հաստատեց Հոգին սուրբ իշնելով Յիսուսի վերայ մկրտութեան ժամանակ և առաքեալների վերայ Պենտէկոստէի օրն և նոցա զօրացրեց իւրեանց դժուարատար պաշտօնի մէջ՝ «Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ի ջրոյ անտի և ահա բացան նմա երկնք և ետես զՀոգին Աստուծոյ, զի իջանէր իբրև զաղաւնի և գայր ի վերայ նորա». Մատթ. Գ. 16 — 17:

Առաքեալները գրողմի խորհուրդը կատարում էին ձեռք դնելով մկրտուածների վերայ, որով վերջիններն զգալի նշանով և զօրութեամբ ընդունում էին Հոգին սուրբ «Եւ իբրև լուան՝ մկրտեցան յանուն Յիսուսի Քրիստոսի... և ի դնել ի վերայ նոցա Պօղոսի զձեռն, եկն Հոգին սուրբ ի վերայ նոցա». Գործք. ԺԹ. 5 — 6:

Գրողմի հական բանն է՝ «Իւղ անոյշ հեղեալ յանուն Յիսուսի Քրիստոսի կնիք երկնաւոր պարգևացա: Ն՛ւթն օրհնած միւռունն է, իսկ արտաքին ձևն է մկրտուածի ճակատն, աչքերն, ականջները, քիթը, ձեռքերը, կուրծքը, թիկունքն և ոտները միւռունով խաչաձև օծելը»:

Այս զգալի օծութեան մրջացով մկրտուածն ընդունում է սուրբ Հոգու օծութիւնը — շնորհքն և զօրութիւնն ու նոցանով պատերազմ մղելով աշխարհի և նորա մօլութիւնների դէմ յաղթող է հանդիսանում:

Հայաստանեալց եկեղեցին այս խորհուրդը կատարում է մկրտելուց անմիջապէս յետոյ, որովհետև Հոգին սուրբն ևս Յիսուսի վերայ լիաւ մկրտուելուց անմիջապէս յետոյ՝ նոյնպէս և առաքեալները ձեռք էին գնում մկրտուածների վերայ նոցա մկրտուելուց անմիջապէս յետոյ:

Մեր եկեղեցին դրոշմի խորհուրդն անկրկնելի է համարում նոյն իսկ այն պատճառով, ինչ պատճառով որ մկրտութիւնը, որովհետև վերջինն առաջինի շարունակութիւնն է:

Ծանօթ. Կաթոլիկ եկեղեցին դրոշմը տալիս է մկրտուածներին 7—12 տարեկան հասակում. այս սովորութիւնը մտաւ ԺԴ. դպրից:

### Ա.Պ.Շ Խ Ա. Բ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ապաշխարութիւնն եկեղեցու խորհուրդներից մինն է, որով զղջացող մեղաւոր հաւատացեալն իւր մեղքերը քահանայի առաջ Աստծուն խոստովանելով՝ իւր հաւատի համաձայն քահանայի միջոցով ստանում է Աստծուց իւր ներգործական մեղքերին թողութիւն:

Ապաշխարութեան խորհուրդը հաստատեց ինքն Յիսուս Քրիստոս ասելով՝ «Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն»: Յիսուս Քրիստոս առաքեալներին տուեց մեղքեր թողնելու իրաւունքը՝ «Փչեաց ի նոսա և ասէ, առէք Հոգին սուրբ, եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի»: Յովհ. Խ. 22:

Այս խորհուրդը պէտք է կատարել նախ՝ կատարեալ զղմամբ, երկրորդ՝ անթերի խոստովանութեամբ և երրորդ՝ հաստատապէս յուսալով, որ Յիսուս Քրիստոսի չարչարանքի արդիւնքով անպատճառ թողութիւն կըստացուի: Խորհուրդս մատակարարողներն են եկեղեցու կարգաւոր պաշտօնեաները:

### Հ Ա. Պ Ո Ւ Դ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Հաղորդութիւնն եկեղեցու սրբարար խորհուրդներից մինն է, որ Յիսուս Քրիստոս իւր փրկագործ չարչարանքի և մահուան լիշտակի համար սահմանեց Պասեքի տօնի ժամանակ, այսպէս՝ Յիսուս տանում է իւր ձեռքն անխմոր հացը (բաղարջ), օրհնում է և տալիս է իւր աշակերտներին ասելով՝ «Առէք կերայք այս է մարմին իմ» և ապա առնելով բաժակն օրհնում է և տալիս է իւր աշակերտներին ասելով՝ «Արբէք ի սմանէ ամենենքեան, այս է արիւն իմ»:

«Զայս արարէք առ իմոյ լիշտակի»:

«Քանիցս անգամ եթէ ուտիցէք զհացս զայս և զբաժակս ըմպիցէք, զմահ ծեառն պատմեցէք». Կորնթ. 1. ԺԱ. 26:

Հաւատացեալը հացի և գինու տեսակով ճաշակելով Յիսուս Քրիստոսի մարմինն և արիւնը միանում է Յիսուսի հետ և ընդունում է յաւիտենական կեանքը՝ «Որ Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ», Մատթ. ԺԹ. 27: Պօղոս տռաքեալն ամուսնութեան

զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, նա լիս բնակեցի և ես ի նմա»: Յովհ. Զ. 57:

«Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենականս և ես յարուցից զնա յաւուրն յետնում»: Յովհ. Զ. 58:

Հաղորդուող հաւատացեալը պէտք է ունենալ նախ՝ սրտով զղումն, երկրորդ՝ հաստատուն հաւատ, երրորդ՝ զերմ յանկութիւն Յիսուսին մօտենալու և չորրորդ՝ հաստատ որոշումն այլևս չմեղանչելու: Հակառակ դէպքում հաղորդուող հաւատացեալը դատապարտվում է:

Խորհուրդս մատակարարողներն են եկեղեցու կարգաւոր պաշտօնեաները:

Հաղորդութեան էական բանն է «Առէք կերայք» և «Արբէք ի սմանէ» խօսքերը: Նիւթն է անխմոր հաց (բաղարջ) և անապակ գինի. արտաքին ձեն է խորհրդի գործողութիւնն, որ կոչվում է պատարագ:

Հաւատացեալը պարտաւոր է տարուալ մէջ մի քանի անգամ հաղորդուիլ: Մեր եկեղեցին անխտրաբար ճաշակում է ամեն հասակի հաւատացեալին, իսկ կաթոլիկ եկեղեցին 16 տարեկան հասակից և միայն Մարմնով, իսկ իրանք հոգեորականները ճաշակվում են Մարմնով և Արիւնով:

Ծանօթ. Յունաց եկեղեցին ընդունում է հաղորդութեան նիւթն խմորով հաց և ջրախառն գինի. կաթոլիկ եկեղեցին՝ բաղարջ և ջրախառն գինի:

### Ա. Մ Ո Ւ Ս Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ամուսնութիւնն եկեղեցու սրբարար խորհուրդներից մինն է, որ նախ՝ սահմանեց ինքն Աստուած դրախտի մէջ օրհնելով նախամարդոց միաւորութիւնն ասելով՝ «Աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր». Ծննդ. Ա. 28, և. ապա Յիսուս ամուսնութեան նախկին եղծեալ սրբութիւնը, միաւորութիւնն և անլուծանելի կապը սրբագործեց և հաստատեց տոելով՝ «Զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ», Մատթ. ԺԹ. 27: Պօղոս տռաքեալն ամուսնութեան

խորհուրդն անուանում է մեծ: Նա առն և կնոջ միաւորութիւնը նմանեցնում է Քրիստոսի իւր եկեղեցու հետ միաւորութեանն ասելով՝ «Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ի Քրիստոս և յեկեղեցի». Եփես. Ե. 32:

Խորհուրդս մատակարարողներն են եկեղեցու կարգաւոր պաշտօնեաները:

Ամուսնութեան էական բանն է «Առեալ զձեռն Եւայի և տուեալ ի յաջն Ադամայ և ասէ՝ այս է ոսկը լոսկերաց իմոց և մարմին ի մարմնով իմմէ. ստ կոչեսցի կին, զի լառնէ իւրմէ առաւ»: Արտաքին ձևն է առն և կնոջ իւրեանց ազատ կամքով միմեանց ձեռք տալը՝ որով ներքին կերպով, սրտով, կամքով կազմում են մի բարոյական միութիւն և լինում են մի անձն:

### ԿԱՐԳ ԿԱՄ ԶԵՇՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Կարգ կամ Զեռնադրութիւնն եկեղեցու սրբարար խորհուրդներից մինն է, որ սահմանեց ինքն Յիսուս Քրիստոս Զիթենեաց սարի վերայ: Նա իւր համբարձման ժամանակ օրհնելով իւր տուաքեալներին՝ իրաւունք տուեց նոցա ուսուցանելու հեթանոսներին, մկրտելու և մարդոց մեղքերին թողութիւն տալու. «Եհան զնոսա մինչև ի Բեթանիո և ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա»: Ղուկ. ԻՊ. 49: «Եթէ ումեք թողուցուք զմելոս, թողեալ լիցի»: Յովհ. Ի. 22:

«Գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենալն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ուսուցէք նոցա պահել զամենալն, զոր ինչ պատուիրեցի ձեզ»: Մատթ. ԻԸ. 19—20:

Հայաստանեաց եկեղեցու օրէնքով այս խորհրդին արժանանում են այն անձինքը, որոնց բարի վարքի և ուսումտն մասին վկայում է նոցա ընտրոլ եկեղեցին — ժողովուրդն, և որոնք չունին ոչինչ մարմնական արտա:

Այս ընտրեալները՝ նուիրելով իւրեանց անձն Աստծու ծառայութեանը, դիմում են եպիսկոպոսին, վերջինս օրհ-

նում է նոցա, օծում է սուրբ միւռոնով և իրաւունք է տալիս Աստծու տանը սրբագործութիւն անելու և ժողովրդին հոգեւոր պիտոյքը մատակարարելու:

Կարգն ունի եօթն աստիճան՝ Պոնապանութիւն, Պարութիւն, Երգմնեցուցութիւն, Զահնկալութիւն, Կիսամարկաւագութիւն, Սարկաւագութիւն և Քահանայութիւն: Եպիսկոպոսն և Կտիողիկոսն ևս ըստ կարգի քահանայ են, սակայն քահանայից զանազանվում են իւրեանց պաշտօնի և իշխանութեան գերազանցութեամբ:

Կարգի աստիճանը տրվում է եպիսկոպոսից՝ առաջինգն աղօթքով, վեցերորդը՝ ձեռնադրութեամբ, իսկ եօթներորդը՝ ձեռնադրութեամբ և օծմամբ:

### ՕՇՈՒՄՆ ԿԱՄ Ա.33ԵԼՈՒԹԻՒՆ ՀԻՒԱՆԴԱՑ

Օծումն կամ Ա.ցելութիւն հիւանդաց եկեղեցու սրբարար խորհուրդներից մինն է, որ սահմանեց ինքն Յիսուս այցելութիւն անելով հարիւրապետի հիւանդ ծառային և Պետրոսի զոքանչին ու բժշկելով նոցա:

Յիսուս բժշկելու իշխանութիւնը տուեց և իւր առաքեալներին՝ «Ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա՝ և բժշկել զամենալն հիւանդութիւնս». Մատթ. Փ. 1:

«Եւ եղև հայրն Պոպղիալ ի ջերմն և յախտ թանջից հիւանդանալ զնել, առ որ մտեալ Պօղոս և կացեալ յազօթս, եգ զձեռն և բժշկեաց զնա». Գործք. ԻԸ. 8:

Հայաստանեաց եկեղեցին այս խորհրդը կատարում է ալսպէս՝ քահանան խաչով և աւետարանով զնում է հիւանդի մօտ, կարգում նրա վերայ սահմանուած աղօթքներն, աւետարանները, գլքերը, սաղմոսներն և շարականները:

Հայոց Մաշտոցում այս խորհրդն անուանվում է «գիշերային ժամ»:

Հիւանդը ջերմեսանդութեամբ խոստովանում է իւր մեղքերը, հաղորդվում Քրիստոսի սուրբ մարմնին և արեանն ու իւր հաւատի համաձայն ստանում է մեղքերին թողութիւն և ցաւերին թեթեութիւն:

Յակովիոս առաքեալն այսպէս է պատուիրում «Հիւանդանայց ոք ի ձէնջ՝ կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն՝ և արասցեն ի վերալ նորա աղօթս. օցեն իւզով յանուն Տեառն: Եւ աղօթքն հաւատովքն փրկեսցէ զաշխատեալն՝ և յարուսցէ զնա Տէր. Եթէ մեղս իցէ գործեալ, թողցի նմա» Յակ. Ե. 14—16:

Այս խորհուրդն երբեմն առաքեալները՝ հին ուխտից առած՝ կատարում էին հիւանդին իւզով օծելով, իսկ առաքեալների լաջորդներն և ճեր եկեղեցին՝ առաքելական գարեց սկսած՝ կատարում են առանց օծման. Քրիստոս ինքը միշտ, իսկ իւր առաքեալները շատ անգամ նոյն խորհուրդը կատարում էին առանց օծման, որպէստեւ ինչպէս Սարգիս շնորհալին ևս ասում է, «Ոչ եթէ իւզն տայ առողջութիւն հիւանդին, ալլ անուն Տեառն»:

«Հաւատամֆ... ի յարութիւն մեռելոց.

Այս դաւանութեամբ խոստովանում ենք, թէ աշխարհի վերջն ամեն ննջեցեալների մարմիններն՝ Աստծու հրամանով յարութիւն առնելով, պիտի միաւորութիւն իրանց հոգիների հետ և կենդանի մնացածների հետ միասին պիտի դատուին՝ «Ունիմ զլոյտ առ Աստուած, որում դոքա իսկ ակն ունին, թէ յարութիւն լինելոց է արդարոց և մեղաւորաց». Գործք. ԻԳ. 15: «Ամենեքեան ննջեսցուք, ալլ ոչ ամենեքեան նորոգեսցուք. յանկարծակի յական թօթափել՝ ի փող յետին քանզի փող հարկանի, և մեռեալք յարիցեն առանց ապականութեան, և մեք նորոգեցուք» Կորնթ. ԺԵ. 51—52:

Արդարների մարմինները յարութիւնից յետոյ կլինեն փառաւոր՝ «Յորժամ Քրիստոս յալտնեսցի՝ կեանքն Ճեր, յախժամ և դուք ընդ նմա յալտնեսցիք փառօք» Կող. Գ. 4: Անապական՝ «Անրմանի ապականութեամբ, յառնէ առանց ապականութեան» ա. Կորնթ. ԺԵ. 42: Անմա՞ն՝ «Քանզի մեռանել ևս ոչ կարեն, զի հաւասար հրեշտակաց են և որդիք Աստուծոյ». Ղուկ. Ի. 36: Պայծառ իբրև արեգակն՝ «Յախժամ արդարքն ծագեսցին իբրև զարեգակն յարքալութեան երկնից». Մաթ. ԺԳ. 43:

«Հաւատամֆ... ի դատաստանն յափենից հոգոց եւ մարմնոց, յարքայութիւն երկնից, եւ ի կեանս յափենականս».

Սորանով դաւանում ենք, թէ Յիսուս կրկին գալու է աշխարհ և արդարագատ քննութեամբ որոշելով արդարներին մեղաւորներից՝ արդարներին տալու է իւր յաւիտենական արքայութիւնն, իսկ մեղաւորներին մատնելու է գժոխքի յաւիտենական տանջանքին: «Դալոց է Որդի մարդոյ փառօք Հօր իւրոյ հանդերձ հրեշտակօք իւրովք, և յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր». Մաթթ. ԺԶ. 27:

«Յախնժամ ասիցէ թագաւորն ցալնոսիկ, որք ընդ աջ մէն իցեն. եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալն ձեզ արքայութիւն ի սկզբանէ աշխարհի. ասասցէ և ցալնոսիկ, որք ընդ ահեկէն իցեն՝ երթալք լինէն, անիծեալք, ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանալի և հրեշտակաց նորա... և երթիցեն նոքա ի տանջանս յաւիտենականս և արդարքն ի կեանս յաւիտենականս». Մաթթ. ԽԵ. 34—46:

Արքայութիւնը մի ալնպիսի մեզ անիմանալի վիճակ է, որի մէջ արդարներն յաւիտեան կրգայելեն Աստծու տեսութիւնը, հրեշտակների և ըոլոր սրբերի հետ բնակակից լինելով, ինչպէս որ սուրբ Քիրքն ասում է՝ «Զօր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց». ա. Կորնթ. Բ. 9:

«Քիտեմք զի յորժամ նա յալտնեսցի՝ նման նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա որպէս և էն». ա. Յով. Գ. 2:

«Ապա և մեք որ կենդանւոյն մնացեալ իցեմք, նոքօք հանգերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ Տեառն յօդս, և այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք». ա. Թէսաղ. Գ. 16: «Բազումք յարեւլից և յարեմտից եկեսցեն, և բազմեսցեն ընդ Արքահամու և ընդ Խաչակայ, և ընդ Յակոբու յարքալութեան երկնից». Մաթթ. Լ. 11:

«Մժոխքը մի սարսափելի վիճակ է, ուր մեղաւորները պէտք է զրկուին Աստծու տեսութիւնից, յաւիտեան պիտի

տանջուին իւրեանց խղճի խալթից և հետեաբար նոքա սգի և խուարի մէջ կապրին. «Երթիցեն նոքա ի տանջանսն յաւիտենականս». Մատթ. ԻԵ. 46:

«Եւ ասասցէ, ոչ գիտեմ զձեզ ուստի էք, ի բաց կացէք յինէն ամենայն մշակք անիրաւութեան, անդ եղիցի լալ և կրծել ատամանց». Ղուկ. ԺԿ. 27: «Եւ որդիքն արքայութեան ելցեն ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ և կրծել ատամանց». Մատթ. Ը. 12:

- Ա. Խապէս՝ բոլոր մեր սովորած հաւատալիքները սոքա են՝
1. Գոյութիւն Ա.ստուծոյ,
2. Միութիւն Ա.ստուծոյ,
3. Կատարելութիւնք կամ Ստորոգելիք,
4. Երրորդութիւն Ա.ստուածային անձանց,
5. Արարչագործութիւն,
6. Նախախնամութիւն Ա.ստուծոյ,
7. Մարդեղութիւն Ա.ստուածորդւոյն,
8. Միւս անդամ գալուստն Ա.ստուածորդւոյն,
9. Իջումն Հոգւոյն սրբոյ ի Յորդանան,
10. Եկեղեցի Քրիստոսի և խորհուրդք Նորա,
11. Յարութիւն մեռելոց և
12. Վերջին դատաստան։

## Մ Ա. Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

### Ց Ո Յ Ց Ո

Յոյսն Ա.ստուածային ներքին շնորհքն է, որով քրիստոնեայն զօրացած առանց կասկածի սպասում է ստանալ Ա.ստծուց խոստացած արդար վարձատրութիւնը կամ պատիժն իւր գործերի համաձայն: «Ա.մեն ամեն ասեմ ձեզ, որ զիանն իմ լսէ և հաւատալ Ա.յնմ որ առաքեացն զիս, ընդունի զկեանս յաւիտենականս» Յով. Ե. 24: Աստծու խոստացած բարութիւններն են յաւտենական կեանք, հանգիստ և անվախճան երանութիւն. «Եկալք առիս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ» Մատթ. ԺԱ. 29:

Մեր գէպի Ա.ստուած ունեցած յոյսի հիմքն այն հաստատուն հաւատն է, թէ Ա.ստուած ծայրագոյն բարի է և թէ մենք հրաւիրւած ենք երջանկանալ նորանով յաւիտեան՝ թէ այս երկրաւոր կեանքու մ և թէ հանգերձելում:

Ա.խապէս մեր յոյսի առարկան Ա.ստուած է, որովհետեւ նա տալիս է մեզ այն շնորհքներն, որ իւր Որդու միջոցով խոստացել է մեզ ներկայ կեանքի մէջ և երկրորդ՝ այն յաւիտենական փառքը, որով պիտի փառաւորուենք յաւիտենական հանգերձեալ կեանքում: Մեր փրկարար յոյսն արտայալու միջոցն աղօթքն է:

### Ա. Դ Օ Թ Ք

Ա.ստծու հետ խօսելը կոչվում է աղօթք:

Ա.զօթելով նախ՝ մեր սրտի գոհունակութիւն ենք յայտնում Ա.ստծուն մեր վայելած բարիքների համար. երկրորդ խնդրում ենք նորանոր Հոգեոր և մարմնաւոր բարիքներ և երրորդ՝ փառաբանում ենք նորա անունը. «Խնդրեցէք նախ

զարքարութիւն Աստուծոյ և ալդ ամենալն լաւելցի ձեզ»:  
Մատթ. Զ. 33:

Մարդս աղօթքով կարող է մօտենալ Աստծուն և հաս-  
տառապես հաւատի և յոյսի մէջ:

Աղօթքը լինում է հրապարակական, որ շատ աղօթողների  
հետ միասին կարգացվում է Աստծու տաճարի մէջ՝ «Ի տա-  
ճարի նորա ամենեքեան ասասցեն նմա զփառս». Սաղ. Ի. 9.  
և առանձնական, որ կատարում է մարդս ինքն առանձին  
միայնակ Յիսուսի պատուիրանի համաձայն՝ «Մուտ ի սենեակ  
քո, և փակեա զգուռս քո, կաց յաղօթս առ Հայր քո ի ծա-  
ծուկ» Մատթ. Զ. 6:

Յիսուս Քրիստոս մեզ այսպէս սովորեցրեց աղօթել՝ «Յոր-  
ժամ կայցէք յաղօթս մի շատախօսք լինիք... այսպէս կա-  
յցէք յաղօթս»

Հայր մեր, որ յերկինս ես. սուրբ Եղիցի անուն նո.  
Եկեսցէ արքայութիւն նո, Եղիցին կամֆ նո, որպէս յեր-  
կինս եւ յերկրի, զիաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր,  
եւ քող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեմ քողում մե-  
րոց պարտապանաց. եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն,  
այլ փրկեա զմեզ ի չարէ.

Զի նո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յա-  
ւիտեանս, ամէն»: Մատթ. Զ. 7—13:

Այս աղօթքն անուանվում է տէրունական աղօթք և բա-  
ժանվում է երեք գլխաւոր մտսերի՝ ա) Կոչումն, բ) Խնդր-  
ուածներ և գ) Փառաբանութիւն:

ա. Կոչումն է Հայր մեր, որ յերկինս ես: Այս խօս-  
քերով Քրիստոս մեզ սովորեցնում է, որ Աստծուն Հայր  
անուանենք, որովհետեւ Նա իւր ողորմութեամբ մեզ քրիս-  
տոնեաներիս որդի անուանեց. Նա մեզ սիրում է Հօր պէս  
և պատրաստ է ամեն բանում մեզ օգնելու: Որ յերկինս  
ես, ասում ենք այն պատճառով, որ մեր ուշքն ու միտքն  
երկրաւոր կեանքից վերացնելով՝ հոգեռը կեանքն աչքի  
առաջ ունենանք աղօթելու ժամանակ:

բ. Խնդրուածներն եօթն են՝

1. Սուրբ Եղիցի անուն նո: Սորանով մենք խնդրում  
ենք, որ Նա մեզ տալ կարողութիւն, շնորհը իւր սուրբ  
անունը մեր մէջ մաքուր, սուրբ պահելու. կարողութիւն  
տայ, որ չար գործերից հեռու մնանք:

Եթէ մենք ստախոսութիւնից, իրար մատնելուց, բամ-  
բասելուց, ուրիշին ծաղրելուց, հայհոյելուց և ուրիշ սոցա  
նման մեղքերից հեռու կը մնանք, այն ժամանակ Աստծու  
անունը սուրբ պահած կը լինենք՝ «Տեսցին զգործս ձեր բարիս  
և փառաւորեսցեն զնալր ձեր որ յերկինս է». Մատթ. Ե. 18:

2. Եկեսցէ արքայութիւն նո: Սորանով մենք խնդրում  
ենք, որ Աստուած մեզ շնորհը, կարողութիւն տայ, որպէս  
զի մեղքից հեռանանք և նորա արքայութիւնը – սրբութիւնը  
մեր սրտի մէջ բնակի. իսկ եթէ մեր սրտի մէջ սրբութիւնը  
կը բնակի, կը նշանակէ, որ մեր մէջ բնակում է Աստուած,  
որովհետեւ ինքն Աստուած սրբութիւն է՝ «Ոչ գայ արքա-  
յութիւն Աստուծոյ խտրանօք... զի ահա արքայութիւն  
Աստուծոյ ի ներքս ի ձեզ է». Ղուկ. Ժէ. 20:

3. Եղիցին կամֆ նո որպէս յերկինս եւ յերկրի,  
Այս խօսքերով խնդրում ենք. թէ ինչ որ մենք գործում  
ենք և կամ ինչ որ մեզ է պատահում – այս բոլորն ոչ թէ  
մեր ցանկացածի պէս լինի, այլ ինչպէս որ Դու, Աստուած,  
կամենում ես, և յալտնում ենք մեր սրդիական հնագան-  
դութիւնն այն բոլորն ընդունելու, ինչ որ Նա կը բարեհա-  
ճի մեզ տալ, որովհետեւ ինքն Աստուած գիտէ թէ մեզ ո՛ր  
ժամանակ ինչ բան է հարկաւոր ու խնդրողին էլ ողոր-  
մածաբար տալիս է:

Նաև խնդրում ենք որ մեզ կարողութիւն տալ իւր կամքն  
այնպէս կատարել, ինչպէս որ երկնքում հրեշտակներն և  
արդարները կատարում են՝ «Զի գու Տէր ամենակալ, գիտես  
զպէտս մեր և զկարիս՝ տռաւել քան զոր խնդրեմք և իմա-  
նամք» Ժամագիրք.

4. Զիաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր:  
Այս խօսքերով խնդրում ենք, որ Աստուած մեզ տալ մեր  
մարմնի համար ամենակարեւոր պիտոյք – ուտելիք, խմելիք,

Հագնելիք, բնակարան, որպէս զի կարողանանք ապրել։  
Նաև այս խնդրուածով Քրիստոս մեզ սովորեցնում է,  
թէ միմիայն այս օրուայ համար չմտածենք, այլ Աստծու  
վերայ յոյս պիտի դնել, և նա մեզ կը տայ՝ «Քանզի գիտէ  
Հայրն ձեր երկնաւոր, թէ պիտոյ է ձեզ այդ ամենալին.  
Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստծուոյ և զարդարու-  
թիւն նորա և այդ ամենալին յաւելցի ձեզ»։ Մատթ. Դ. 4:

5. Եւ քոյ մեզ զպարփս մեր, որպէս եւ մե՛ք բռ-  
դումք մերոց պարտապանաց։ Այս խօսքերով խնդրում ենք  
մեր պարտքերն, որ են մեր մեղքերը՝ մեզ ներել, ինչպէս  
որ մեր դէմ մեղանչողներին ներում ենք։

Աստուած մեզ տուել է օրէնք, եթէ այդ օրէնքը,  
պատուիրանը չենք կտտարում, նշանակում է, որ մենք  
պարտական ենք մնում Աստծուն— մեղք ենք գործում. եթէ  
մենք Աստծուց մեր մեղքերի թողութիւն ենք խնդրում,  
ոտքայն մեր ընկերներին չենք ներում, այն ժամանակ Աս-  
տուած էլ մեզ չի ներիլ. արօթողը պիտի խաղաղ հոգի և  
սէր ունենալ դէպի իւր ընկերները՝ «Եթէ թողուցուք  
մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ Հայրն ձեր երկ-  
նաւոր զյանցանս ձեր։ Ապա թէ ոչ թողուցուք մարդկան  
զյանցանս նոցա, և ոչ Հայրն ձեր թողցէ զյանցանս ձեր»։  
Մատթ. Զ. 14—15։

6. Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն։ Սորանով  
խնդրում ենք մեզ հեռու պահել վատ պատահմունքներից,  
որոնք կարող են մեզ մեղքի մէջ ձգել. նաև խնդրում ենք  
զօրութիւն տու մեզ փորձանքներին դիմադրելու։

7. Այլ փրկեա՛ զմեզ ի չարէ։ Սորանով խնդրում ենք  
ազատել մեզ ամեն տեսակ թշուառութիւնից և անարդա-  
րութիւնից. հեռու պահել մեզ վատ մարդիկներից և վատ  
ճանապարհներից։

Այս եօթն խնդրուածներից միմիայն չորրորդը վերաբե-  
րում է մեր մարմնական պիտոյքներին, իսկ մնացեալ վեցը՝  
հոգուն։ Սորանով Յիսուս մեզ պարզ հոսկացնում է, որ մարդս  
իւր հոգու փրկութեան համար աւելի պիտի մտածէ, մեծ

զգուշութիւններ պիտի բանացնէ, որպէս զի հոգին չկորցնի։  
գ. Փառաբանութիւն է՝ Զի Ի՞ն է արքայութիւն եւ զօ-  
րութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն։ Այս խօսքերով մենք  
ազօթողներս Աստծուն փառաբանում ենք, յայտնում ենք  
մեր շնորհակալութիւնն և յոյսն այն բանի մասին, որ Աստ-  
ուած մեր խնդրածը կը կատարի. յայտնում ենք, որ ամեն  
բարիք Աստծուն է պատկանում, նորա իշխանութեան տակն  
է գտնվում այն բոլորն, ինչ որ խնդրում ենք. Դու, Աստ-  
ուած, զօրութիւն ունիս մեր խնդրածը տալու և քեզ պատ-  
կանում է յաւիտենական փառքը։ Ամէն ասելով խոստովա-  
նում ենք, թէ վերև ասածներն իրաւ է, այդպէս լինի, — ցոյց  
է տալիս, որ մենք՝ ազօթելով, Աստծու վրայ յոյս և հա-  
ւատ ունինք։

---

## Ս.ՍՈՒ.ԾԱՅԻՆ ՕՐԵՆՔ

Բարի գործերի համար ստեղծուածներս (Եփես. Բ. 16) Աստծուց ստացել ենք միջոցներ բարին չարից ջոկելու: Այս միջոցներն երկու տեսուկ են՝ աստուածալին ներսի օրէնքն կամ խղճմտանքի ձայնն, և աստուածալին արտաքին օրէնքը՝ կամ Աստծու պատուիրանները: Որովհետեւ այս օրէնքով որոշվում է, կանոնաւորվում է մարդոցս կեանքն ու գործունէութիւնն, ուստի տովում է բարոյական օրէնք: Ներսի օրէնքն ուրիշ խօսքով ասվում է բնկան բարոյական օրէնք, արտաքինը՝ գերենական, յայտնեալ գրաւոր օրէնք:

## ԲՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

Բնական օրէնք ասելով հասկանում ենք այն օրէնքն, որ Աստուած դրել է մեր հոգու՝ սրտի մէջ և ցոյց է տալիս մեզ թէ ո՞ն է բարին, և ո՞րը չար, թէ ինչ պէտք է գործենք, և թէ ինչ բարից պէտք է հեռանանք: Այս օրէնքն ամեն մարդու մէջն է, որ է խղճմտանքը, որ մեր կեանքը դեկավարողն է, նա է վկայ և դատաւոր մեր արարքների: այս պատճառով ի զուր չէ որ մարդիկ խղճմտանքին անուանում են «Աստծու ձայն»: Ով որ խղճմտանքի համաձայն է ապրում, այնպիսին երջանիկ է իւր ամբողջ կեանքումն, մինչև անգամ մահուան անկողնումն, իսկ նա, ով որ խղճմտանքի հակառակ կեանք է վարում, այնպիսին չէ կարողանում նորա խայթերից փախչիլ ու ծածկուիլ, ինչպէս որ, օրինակ, եղբայրասպան կայէնք:

Խղճմտանքը մեր հոգուն կարողութիւններից մին լինելով՝ հոգու հետ սերտ կառ ունի և կախումն ունի հոգու զարգացումից ու կատարելութիւնից: պատճառն այս է, որ զանազան տեսակ զարգացած մարդոց խղճմտանքը զանազան է իրարից և մինչև անգամ իրար հակադիր

Խտիամարդոց պատուիրանազնութիւնից լետոյ հոգին կորցնելով իւր սրբութիւնը՝ խղճմտանքն էլ խուարեց, աղօտացաւ: Թէև մեր խղճմտանքը, որ է բարոյական օրէնք,

## Մ.Ա.Ս.Ն ԵՐՐՈՐԴ

Պ Է Ր

Աստծուն սիրելը մի ներքին շնորհք է, որով առաջնորդվում ենք այս աշխարհումս Աստծու կամքի համաձայն ապրելու՝ այսինքն մեր բոլոր կեանքով Աստծուն նուիրուիլ:

Մեր սիրող առարկան Աստուած է, սակայն Յիսուս Քրիստոս սովորեցրեց մեզ, թէ չենք կարող Աստուած սիրել առանց մեր ընկերները սիրելու, ուստի և ասաց նա օրինականին՝ «Սիրեսցես զԾէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն մասց քոց. նման սմին սիրեսցես զընկերն քո իբրև զանձն քո. յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարդարէք կախեալ կան». Մատթ. ԻԲ. 37:

Քրիստոնէի սէրն առ Աստուած կատարեալ է, երբ նա Աստծու բոլոր պատուիրանները կամ օրէնքները կատարում է անթերի, որովհետեւ ալդ ամենն առաջացած լինելով միւնոյն աղբիւրից հաւասարապէս պարտաւորական են մեզ համար՝ «Այս է սէրն Աստուածոյ, զի զպատուիրանս նորա կատարեսցուք և պատուիրանք նորա չեն ինչ ծանունք»: Յով. Ե. 3.

Քրիստոնեայն չէ կարող արդարութիւն ձեռք բերել Աստծու օրէնքները միմիայն արտաքուստ (ինչպէս փարիսեցիները) կատարելով. այլ անկեղծութեամբ ընդունելով աւետարանական ճշմարտութիւններն, այն է հաւատով միանալով Յիսուսի հետ. իսկ հաւատը մեռածէ առանց սիրող, առանց այն մեծ շնորհք, որ զրեց Յիսուս մեր հոգու մէջ և որ կենդանացնում է մեզ, լուսաւորում և առաջնորդում դէպի յաւիտենական երջանկութիւնը:

ինքն ըստ ինքեան գոհացուցիչ է, որի համար որ նշանակուած է նա (Հռով. Ա. 19—20), սակայն մարդոց մեղքի մէջ ընկնելուց յետոյ՝ խղճմտանքը խաւարեց, ուստի բարոյական անկման մէջ թարթափող մարդոց չէր կարողանում ուղղել և հասցնել բարոյական կատարելութեան: Բարոյական օրէնքի այս թերութիւնը նորանից է երեսում, որ ընկած մարդը խղճմտանքի զեկավարութեամբ պարզ կերպով չէ կարողանում իրան Աստծու կամքը ներկայացնել, ուստի չէ կարողանում գնահատել նա բարոյական կեանքն ու գործունեութիւնը, թէ ինքն բարոյական օրէնքի համաձայն է ապրում, թէ ոչ:

Արդ՝ եթէ բնական օրէնքը գոհացուցիչ չէ ընկած մարդուն դէպի բարոյական կատարելութիւն ու փրկութիւն տանելու համար, եթէ այդ օրէնքը մեր մէջ խաւարած ու ազօտ է երեսում, ապա ուրեմն՝ անհրաժեշտ է ունենալ լուսի մի այլ աղբիւր, որ կարողանայ այդ օրէնքը լուսաւորել ու պարզել լրացնել և զօրացնել նորան: Ընկած մարդու այս կարեքին ինքն ամենաբարի Աստուած օգնութեան հասաւ՝ պարզելով յայտնեալ կամ գրաւոր օրէնք: Հին կտակարանում այս օրէնքն Աստուած տուեց Մովսէս մարդարէի ձեռքով, իսկ նոր կտակարանում՝ Յիսուս Քրիստոսի ձեռքով:

### ՅԱՅՏՆԵՍԼ Ա.ՍՏՈՒ.ԾԱՅԻՆ ՕՐԷՆՔ

Ա. Հ ի ն օ ր է ն ք

Հին օրէնքները նոքա են, որոնք Աստուած տուեց իսրայէլացւոց ազգին Մովսէս մարդարէի ձեռքով:

Այս օրէնքները բաժանվում են երեք կարգի՝ ա) Արարողական կամ Ծիսական, բ) Դատաստանական և գ) Բարոյական:

Արարողական կամ Ծիսական այն օրէնքներն են, որոնք Աստուած սահմանեց հին ուխտի մէջ աստուածալաշտութեան կարգն ու արարողութիւնները կատարելու ձեերի մասին:

Դատաստանական այն օրէնքներն են, որոնք Աստուած

սահմանեց Իսրայէլի որդիներին լանցանքի համաձայն պատժելու:

Թէ արարողական և թէ դատաստանական օրէնքները քրիստոնեաների համար դադարած են, որովհետեւ Պօղոս առաքեալի ասութեան համաձայն՝ «Մեք ոչ եմք ընդ օրինոք, այլ ընդ շնորհօք»: Հռով. Զ. 14:

Իսկ բարոյական օրէնքներն, որոնք տասնաբանեալ պատուիրաններն են, կարեոր բացարութեամբ աւելի պարզուեցան և հաստատուեցան մեզ համար Յիսուս Քրիստոսով՝ «Մի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս և զմարգարէս, ոչ եկի լուծանել, այլ լնուլ»: Մատթ. Ե. 17:

### ՏԱ.ՅՆ.Ս.Բ.Ա.ՆԵ.Ս.Յ ՊԱ.ՏԳ.Ա.ՄՆԵՐԼ

ա. Ես եմ Տէր Աստուած քո և մի եղիցին քեզ այլ աստուածք բաց լինէն:

բ. Մի արասցես գու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս ի վեր և որ ինչ յերկիր ի խոնարհ:

գ. Մի առնուցուս զանուն Աստուածոյ քո ի վերայ սնուեաց:

դ. Յիշեալ սրբել զօրն շաբաթու:

ե. Պատուեալ զհայր քո և զմայր. զի բարի լինիցի քեզ և երկայնակեաց լիցիս ի վերայ երկրի:

զ. Մի սպանաներ:

է. Մի շնար:

ը. Մի գողանար:

թ. Մի սուտ վկալեր զընկերէ քումմէ:

ժ. Մի ցանկանար տան ընկերի քո և մի ամենալինի որ ինչ նորա իցէ:

Այս պատուիրաններն ընդհանրապէս առնելով ընդդրկում է մարդու ամբողջ կեանքն իւր բոլոր յարաբերութիւններով ու գործունէութեամբ: Առաջին չորս պատուիրանները հրամայում են սիլել Աստծուն. իսկ մնացեալ վեցը՝ ընկերոյ, իսկ վերջին պատուիրանների մէջ բովանդակած են և պարտաւորութիւններն դէպի մեր տնձն,

որովհետև ընկերոջ պէտք է սիմել, ինչպէս որ մենք մեր  
անձն ենք սիրում:

ա. Ես եմ Տէր Ասուած քո եւ մի՛ եղիցին իեզ այլ  
ասուածք բաց յինէն:

Այս խօսքերով Աստուած Հրամայում է ճանաչել նորան  
միակ ճշմարիտ Աստուածը, հաւատալ նորան, վախենալ  
նորանից, երկրպագանել և ազօթել նորան:

Սրգելում է անաստուածութիւնը, կռապաշտութիւնն,  
անհաւատութիւնն և յուսահատութիւնը:

բ. Մի՛ արասցես դու մեզ կուռս ըստ ամենայն  
նմանութեան, որ ինչ յերկինս ի վեր եւ որ ինչ յերկիր  
ի խոնարի:

Սորանով Աստուած մեզ արգելում է նիւթապաշտու-  
թիւն, կեղծաւոր աստուածպաշտութիւն, արբեցութիւն,  
որկրամոլութիւն, արծաթսիրութիւն... այլ Հրամայում է  
դոցա գէմ առաքինութիւն գործել:

գ. Մի՛ առնուցուս զանուն Ասուծոյ քո ի վերայ  
սիոնեաց:

Այս խօսքերով Աստուած Հրամայում է, որ մեր խօ-  
սակցութիւնների մէջ Աստծու անունն երկիւզով լիշենք.  
նորա անունով միմիայն ճշմարիտ գործերի համար երդ-  
ուենք և այն էլ շատ կարեւոր ժամանակ:

Սրգելում է Աստծու անունն ամեն բանի համար  
թեթևամտութեամբ լիշել, առանց հարկաւորութեան երդ-  
ուել Աստծու անունով, կեղծաւորութեամբ ազօթել, եկե-  
ղեցու մէջ խօսել կոմ ծիծալել:

դ. Յիշեա՛ սրբել զօն շաբարու:

Այս պատուիրանով Աստուած Հրամայում է կիւրակէ  
և տօն օրերը պահել, առանց ծուլանալու եկեղեցի գնալ  
և այնտեղ Աստծուն ազօթել ամբողջ օրը բարի գործերին  
նուիրել, սուրբ գիրքը կարդալ խղճմանք քննել և գոր-  
ծած սիմանքը զղալ, աշխատել մեր նմաններին բարու-  
թիւն անել, աղքատներին ողորմութիւն տալ, հիւանդներին

այցելել, վատ գործերից հեռանալ, մտրմնաւոր աշխատու-  
թիւնը դադարացնել, այսինքն առետուրը, վարուցանքն,  
արհեստը...

### Տ Օ Ն Ե Ր

Տօները նուիրած են Յիսուսին, Աստուածածնին, Սրբե-  
րին և երկնալին գօրաց: Այս պատճառով էլ տօները լինում  
են Տէրունական, Աստուածածնի և Սրբերի. սոցանից մի  
քանիսը անշարժ տօներ են, իսկ մի քանիսն էլ շարժական:

Անշարժ կոչվում են այն տօները, որոնք ամեն տարի  
միւնայն ամսաթուին են լինում:

Նարժական կոչվում են այն տօները, որոնք որոշեալ  
ամսաթուեր չեն ունենում, որովհետև Զատիկն ամեն տարի  
միւնայն ամսաթուին չէ պատահում, և որովհետև տօներից  
մեծ մասը կախումն ունին Զատիկից, այս պատճառով տօ-  
ներն էլ շարժական են:

Անշարժ տօներն են՝ Աւետումն (7-ին ապրիլի), Ծնունդ  
և Մկրտութիւն Քրիստոսի (Յ.ին յունվարի), Տեառնընդա-  
ռաջ (14-ին փետրվ.), Յղութիւն Աստուածածնի (9-ին դեկտ.),  
Ծնունդ Աստուածածնի (8-ին սեպտ.), ի տաճար Ընծալումն  
Աստուածածնի (21-ին նոյեմբ.), իսկ մնացեալ թէ տէրու-  
նական և թէ սրբերի տօները շարժական են:

Տէրունական սօներն են՝ Աւետումն, Աստուածայալու-  
նութիւն, Թլփատութիւն, Տեառնընդառաջ, Ծաղկագարդ,  
Զատիկ կամ Պատեք, Համբարձումն, Հոգեգալուստ, Վար-  
դակառ — Պայծառակերպութիւն Քրիստոսի և Սուրբ իսա:

Աստուածածնի սօներն են՝ Վերափոխումն, Յղութիւն  
Աննալից, Ծնունդն, Երից ամաց ընծալումն ի Տաճարն:

Սրբերի սօներն են՝ Թագէսոսի և Բարդուղիմէսոսի երկու  
տօները՝ Լուսաւորչի երեք տօները, Հրեշտակապետաց,  
Ամենալն սրբոց, Սուրբ էջմիածնի տօն (եկեղեցւոյ տօն),  
սուրբ Թարգմանչաց — սուրբ Ստհակի և սուրբ Մեսրովի,  
Արգար և Տրդատ թագաւորների, սուրբ Ղեղոնդանց և

սուրբ Վարդանանց տօները, նաև երեք տիեզերական  
սուրբ ժողովների տօներն և այլն:

Ե. Պատուեա' զիայր ու եւ զմայր, զի բարի լինիցի  
ինք եւ երկայնակեաց լիցիս ի վերայ երկրի:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է սրտով և  
գործով պատուել, սիրել, հնազանդել, ծառայել և ոչ մի  
բանով չանպատուել մեր ծնողներին, մեր մեծամեծներին,  
եկեղեցական հովիւներին, բարերարներին, ուսուցիչներին  
և առհասարակ այն բոլոր անձանց, որոնք մեր բարիքների  
համար աշխատում են:

Արգելում է անհնազանդութիւն, օրինազանցութիւն,  
ապստամբութիւն, ապերախտութիւն...:

Գ. Մի՛ սպանաներ:

Այս խօսքերով Աստուած արգելում է, որ մարդս իրան  
կամ ուրիշն սպանի գործիքով և թէ խօսքով. արգելում է  
ուրիշի կամ իւր մահը ցանկալ կամ նպատակ այդ բանին.  
արգելում է ատել, նախատել, մատնել, կռուել, ընկերին  
վատաբանել կամ բամբասել, ընկերներին գալթակղեցնել  
վատ օրինակներով...

Է. Մի՛ ընաց:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մաքուր  
լինել. արգելում է սրտի չար ցանկութիւններ, չար մտած-  
մունքն իւր վատ բովտնդակութեամբ խօսակցութիւններն  
և երգերը...

Ծ. Մի՛ գողանա:

Սորանով Աստուած արգելում է ամեն տեսակ գողու-  
թիւն և յափշտակութիւն, արծաթսիրութիւն, վաճառակա-  
նութեան մէջ խարէութիւն, կշռքի և չափի մէջ խարդա-  
խութիւն, աղքատներին զրկել, մշակների և ծառաների  
վարձը կտրել, պարտքը չը վճարել, պահ տուածն յետ չը  
դորձնել...

Հրամայում է ամեն բանի մէջ ճշմարտութիւն, արգա-  
րութիւն ունենալ:

Ժ. Մի՛ սուս վկայեր զընկերէ քումմէ:

Սորանով Աստուած արգելում է ամեն տեսակ ստախօ-  
սութիւն թէ ատենի առաջ և թէ հասարակութեան մէջ.  
արգելում է վատաբանել, չարախօսել, բամբասել, անար-  
ժաններին գովել:

Հրամայում է ճշմարտախօս լինել, ամեն տեղ և ամեն  
ժամանակ ասել «այս՝ այս, և ոչն՝ ոչ»:

Ժ. Մի՛ զանկանար տան բնկերի ու եւ մի՛ ամե-  
նայնի որ ինչ նորա իցէ:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեր ըն-  
կերների վերայ չունենալ չար աչք, չար ցանկութիւն. մեր  
ընկերների թէ ներքին և թէ արտաքին լաւ կողմերի վե-  
րայ չնախանձել, ընկերներից ոչ մի բան չյափշտակել, այլ  
Աստուած ինչ որ մեղ տուել է, նորանով էլ բաւականանալ.  
ուրիշներին չվնասել, մի խօսքով հրամայում է մեղ ընկեր-  
ներին ճշմարտութեամբ սիրել ու բարի անել:

### Բ. Ն ո ր օ ր ե ն գ

Նոր օրէնքները Յիսուսից մեզ աւանդած վարդապե-  
տութիւններն են, որոնք առաքեալների և սոցա հետեւող-  
ների միջոցով աւանդուեցան մեզ. Յիսուս մեզ նոր օրէնք  
տալով տասն պատուիրանները ոչ թէ միայն չվերացրեց այլ  
հաստատեց ասելով՝ «Մի համարիք եթէ եկի լուծանել զո-  
րէնս կամ զմարդարէս, ոչ եկի լուծանել, այլ լնուլ» Մատթ.  
Ե. 17. Նա օրէնքը նրանով կատարելագործեց, որ մեռած  
տառերով չէր հասկանում, այլ կենդանի գործով: Փարիսե-  
ցիներն օրէնքը տառացի էին կատարում, շաբաթ օրը հան-  
գըստանում էին և ոչինչ չէին գործում, այն ինչ Յիսուս  
օրէնքը կատարում էր նորա ոգուն նայելով—բարի, սիրով  
գործեր էր կատարում շաբաթ օրը:

Նոր օրէնքը հիմնուած է հետեւեալ սկզբունքի վերայ՝  
«Համենայն զոր միանգամ կամիջիք, թէ արասցեն ձեզ մար-  
դիկ, այնպէս արարէք և գուք նոցա». Մատթ. Է. 12:

Նա հրամայում է ապաշխարել մեր մեղքերն, առանց

որի մեղաւորին փրկութիւն չկալ, անձնատուր զինել աշխարհի անցաւոր փառքերին և վայելչութիւններին, ներել միմեանց, ողորմել աղքատներին. սիրել Աստծուն ամենայն անձնուիրութեամբ, սիրել ընկերին իւր անձի պէս, լինել մարդասէր և բարեացակամ ամենքի համար:

Քրիստոսի բարոյական վարդապետութիւնը համառօտուած է ինն երանութիւնների մէջ՝ *Beati fidei.*

ա. Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից:

բ. Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին:

գ. Երանի հեղոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր:

դ. Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա լագեսցին:

ե. Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն:

զ. Երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիւք, զի նոքա

զԱստուած տեսցեն:

է. Երանի խաղաղաբարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին:

ը. Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից:

թ. Երանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն և ասիցեն գամենալն բան չար զձենջ սուտ վասն իմ. ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են լերկինս. Մատթ. Ե. 3—12:

Ծանօթ. Որպէս զի պարզ տևանենք, թէ Քրիստոսի նոր օրէնքը որքան բարձր և խորին բարոյական վարդապետութիւն է ներկայացնում, անհրաժեշտ է ուսումնասիրել այդ երանութիւնները, որոնց մէջ ցոյց է տուած բարոյական կատարելութեան ամենաբարձր իդէալն (զերակայ) և նորան համելու ձանապահը:

Երանութիւնների մէջ սկզբնական առաքինութիւնը համար վում է հոգւով ալիքաւրիւն: Հոգւով աղքատը միշտ դժգոհ է, որ քիչ բարի գործեր է կատարում, այսպիսին բնականաբար ձգում է դէպի բարոյական գործունէութիւնը, դէպի բարոյական հարստութիւն: Աստծու շնորհքի օգնութեամբ՝ խկապէս նա ստանում է այդպիսի հարստութիւնը. (բ. Կորնթ. Թ. 8):

Մարդու երբ խոստովանում է, որ քիչ բարի գործեր ունի

կատարած, իրանից դժգոհ է լինում, ուստի նորա մեղքերի վերայ ողբալը, սպալը բնականաբար հետեանք է նորա հոգեսր աղքատ լինելուն. սակայն մի այսպիսի զջումն գրաւական է մարդու ուղղուելուն՝ բարոյական հարստութիւնը ձեռք բերելուն: Սորա համար էլ Փրկիչը խստանում է այսպիսի մարդոց միմիթարութիւն:

Այն մարդը՝ որ խստովանում է իւր պակասութիւններն ու ճշմարիտ արտով զջում, բնականաբար միհնոյն պակասութիւնները միւս մարդոց յատուկ համարելով ներզգամիտ է լինում դէպի նոցաւ: Սորանից տեսնում ենք, որ մարդու հնգութիւնը երկու նախընթաց առաքինութիւնների հետեանքն է:

Աղքատութեան մերս կերպով լծորդակից են թէ քաղցն և թէ ծարաւը: Մարդու զգալով քաղցի ու ծարաւի պահանջը ցոյց է տալիս, որ գեռ նորա հոգին փչացած չէ, ապականուած չէ, և թէ նա ընդունակ է կերակուրն ընդունելու և իւրացնելու, երբ նորան կը տան: Այդ պահանջը մարդուն ստիպում է միջոցներ որոնելու իւր քաղցին բաւականութիւն տալու համար, որով իւր մէջ պահանջում է հոգու գործունէութիւնը: Տէրն այսպիսի մարդոց յատանում է յագեցնել, բաւականութիւն տալ:

Քաղցած ու ծարաւ մարդը լաւ է հասկանում նոյնատեսակ պակասութիւնները միւսների մէջ, միշտ կարեկցում է նոցա և սրտով ցանկանում է նոցա վիճակը թեթեացնել, այսպիսի մարդու մէջ առաջանում է ողորմածութեան զգացմունքը դէպի իւր ընկերը:

Երբ մարդու վերոյիշեալ երանութիւնների յատկութիւնները զգացել է ու փորձով տեսել, այնպիսին ստանում է սրտի մարդութիւնը, մի այնպիսի կեցութիւն, որպիսին յիշուած է վկցերորդ երանութեան մէջ:

Մարդու սիրտն ունեցող մարդն աշխատում է միւս մարդոց մէջ էլ սուրբ, մաքուր, պարզ սիրտ գանել իրար հետ յարաբերութիւններ ունեցած ժամանակ: Այս պատճառով, երբ մարդոց մէջ մտերիմ սրտանց յարաբերութիւնները վերանում են նրանց մէջ թշնամութիւն է սերման վում, այն ժամանակ սուրբ սիրտ ունեցողը աշխատում է նոցա մէջ վերականգնել առաջուայ խաղաղասիրական յարաբերութիւններն ու թշնամութիւնն հեռացնել: Այսպէս ուրիշների մէջ խաղաղութիւն ձգելը մաքուր սրտի բնական հետեանքն է:

Որովհետեւ մարդոց մէջ խաղաղասիր յարաբերութիւնների գըլ խաւոր պատճառը մնձ մասամբ արդարութեան պահանջները չկատարելուց են առաջանում, ուստի ճշմարիտ խաղաղասէրը հոգս է տանում ոչ թէ միայն մարդոց իւրար հետ հաշտեցնելու մասին, այլև այդ յարաբերութիւններն արդարութեան սկզբունքների վե-

րայ ամրապնդելու մասին: Այս առաքինութիւնը՝ նախընթացի հետ սերտ միացած՝ արտայայտում է ութերորդ երանութիւնը.

Բայց արդարութեան սկզբունքների հիման վերայ հաշտեցանելը հաստատ և յուսալի կարող է լինել միայն այն ժամանակի, երբ հիմնուած է դա յաւիտենական Արդարութեան—Յիսուս Քրիստոսի վերայ: Այս պատճառով, նոքա, որոնք ցանկանում են ուրիշներին հաջտեցնել և նոցա կեանքը Քրիստոսի—յաւիտենական Արդարութեան վերայ հիմնել, պէտք է իրանց մէջ զգան քրիստոնէական զարկն և այդ կեանքի մէջ թափանցին ու պատրաստ լինեն ուրախութեամբ համբերելու ամեն տեսակ նախատինքն ու հալածանքն ամեն բանի համար: Սորանից տեսնում ենք, որ վերջին առաքինութիւնը բնականաբար կապվում է նախընթացի հետ:

### Մ Ե Ղ Ք

Մեղքն է անհնազանդ լինել Աստծու հրամաններին կամ խղճմանքի հակառակ գործել: «Անհնազանդութեամբ միոյ մարդոյ մեղաւորք բազումք եղեն». Հոռով. Ե. 29:

Մեղքի հետեւանքը մահ և դատապարտութիւն եղաւ՝ և միոչէ մարդոյ մեղք յաշխարհ մտին և ի մեղաց անտի մահ»: Հոռով. Ե. 12:

Մեղք լինում է սկզբնական և ներգործական:

Սկզբնական այն մեղքն է, որ մեր նախամարդիկ իւրեանց անհնազանդութեամբ գործեցին, որին ենթակալ են մարդիկ մինչեւ յանուն Յիսուսի կամ ամենասուրբ Երրորդութեան մկրտուիլն:

Ներգործական այն մեղքն է, որ մարդս գործում է մկրտութիւնից յետով:

Ներգործական մեղքը լինում է թեթև ու մահու չափ: Թեթև այն մեղքն է, որ մարդս ակամայ տկարութիւնից ստիպուած գործում է՝ «Ծառայ, որ ոչ գիտիցէ զկամս տեսուն իւրոյ և արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ»: Դուկ. ԺԲ. 48:

Մահացու այն մեղքն է, որ մարդս գործում է զիտութեամբ իւր և իւր ընկերներին վնասելու նպատակով, որով զրկվում է արդար և յաւիտենական երջանկութիւնից Աստծու հետ հաղորդակցութիւնից:

Մահացու մեղքերն եօթն են՝ Հպարտութիւն, նախանձ, Բարկութիւն, Ծուլութիւն, Ագահութիւն, Որկրամոլութիւն և Բղջախոհութիւն:

Մահօր. Սկզբնական մեղքից աղատվում ենք մկրտութեամբ, իսկ ներգործականից՝ աղաչխարութեամբ և հաղորդութեամբ: Հաղորդուելուց առաջ պէտք է խոստավանութիւնք քահանայի առաջ առելով զ զ ու մ ն՝

Մեղալ ամենասուրբ Երրորդութեան՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Մեղուցեալ եմ Աստուծոյ: Խոստովանիմ առաջի Աստուծոյ՝ և սրբուհւոյ Աստուածածնին, և առաջի քո, հայր սուրբ, զամենալն մեզս, զոր զործեալ եմ: Քանդի մեղալ խորհրդով, բանիւ և գործով, կամալ և ակամալ, գիտութեամբ և անգիտութեամբ, մեղալ Աստուծոյ:

Մեղալ զօրութեամբ հոգւոյս՝ խորամանկութեամբ, անզգամութեամբ, յանդգնութեամբ և երկչոտութեամբ, շուարլութեամբ և ժլատութեամբ, զեղխութեամբ և անիրաւութեամբ, չարահաւանութեամբ, յուսահատութեամբ և թերամտութեամբ, մեղալ Աստուծոյ

Հալր սուրբ, զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան և բարեխօս առ միածին Որդին Աստուծոյ, զի իշխանութեամբդ, որ տուեալ է քեզ, արձակեսցես զիս՝ ի կապից մեղաց իմոց, աղաչեմ զքեզ:

1. Հպարտութիւնն է չար ախտ, որով մարդ իւր անձն ընկերներից գերազանց է համարում և այն ամեն բարիքը կամ շնորհքն, որ ունի, ոչ Աստծուց, այլ իւր անձի ընդունակութիւնից առաջացած է կարծում:

Սորտ հակառակ առաջինութիւնն է խոնարհութիւնն, որով մարդ իւր անձն տմեն բանով հաւասար է համարում իւր ընկերին և ամենալն հեղութեամբ վերաբերում է դէպի իւր ընկերը:

2. Նախանձը մի վատթար կիրք է, որով մարդ յաւում է և տիրում ընկերի լաւութեան և յաջողութեան համար և ուրիխանում է նորա անբալգութեան ու անլաջողութեան վերայ:

Նախանձի հակառակ առաքինութիւնն է ընկերութիւնն, որով մարդ ընկերի յաջողութիւնն և ծախորդութիւնն իրանն է համարում ու ցանկանում է նորա համարայն, ինչ որ ցանկանում է իւր համար:

3. Բարկութիւնն է վնասակար հոգեկան լուզմունք, որով մարդ չկարողանալով տանել մէկից կրած նեղութիւնները կամ պակասութիւնները կատաղի վրէժխնդրութեանոգով է վերաբերում դէպի նա:

Բարկութեան հակառակ առաքինութիւնն է երկայնամութիւնն, որով մարդ համբերատար ոգուով տանում է զուր տեղից կրոծ նեղութիւններն և պակասութիւնները:

4. Ծուլութիւնն է վնասակար ախտ, որով մարդ իւր անձնական հանգստութիւնը պաշտելով զլանում է կատարել իւր պարտաւորութիւնները:

Սորա հակառակ առաքինութիւնն է արիութիւնն, որով մարդ ոգեսրուած միշտ աշխատում է կատարել իւր պարտաւորութիւններն անթերի և միշտ պատրաստ և զգուշ է պատահելի վտանգներից:

5. Ագահութիւնն է մի ախտ, որով մարդ թէ արդար և թէ անարդար ճանապարհներով լափշտակում է ընկերի սեպհականութիւնը, ջանք է անում միշտ աւելացնել իւր սեպհականութիւններն՝ այն է աշխարհակին հարստութիւններն առանց նոցանից բաժին հանելու բարեգործութիւնների, համար:

Սորա հակառակ առաքինութիւնն է ողորմածութիւնն, որով մարդ դրդուած իւր արդար վաստակից օգնում է կարօտեալներին և աղքատներին ու բաժին է հանում մատուածահաճոյ գործերի:

6. Որկրամոլութիւնն է մի վնասակար ախտ, որով մարդը անչափաւորութիւն է պահպանում ուտելիքի և ըմպելիքի մէջ, որ ասվում է որովանամոլութիւն:

Սորա հակառակ առաքինութիւնն է ժուժկալութիւնն, որով մարդ չափաւորութիւն է պահում ուտելիքն, ըմպելիքի և ամենայն ախորդելի բաների մէջ:

7. Բղջախոհութիւնն է մի վնասակար ախտ, որով մարդ անձնատուր է լինում անարդ կրքերին ու ցանկութիւններին:

Սորա հակառակ առաքինութիւնն է ողջախոհութիւնն, որով մարդս ազատ է պահում սիրտը վնասակար մտածմունքներից և իւր անձը հեռու է պահում գայթակղեցուցիչ պատճառներից:

## Հ. Տ. ՄԻԱՅԵՑ

իոյց առջև զափառութ գետ մեջ առջայլաքը ։ Ե  
առջաց առ միջնաց զափառութ և զափառութ ըրած  
ամսացի առջայլաքը ։ Եթէ առջայլաքը ամսացի առջայլաքը ։

**Ա. Դ Օ Թ Վ Ն Ե Բ \*** առաջաշ աղոյն  
ճառե զափառութ զայդ եռութ ։ Ե տարա սրբուն իոյց  
**Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ամէն:**

**Փառք քեզ, Տէր Աստուած մեր.**

**Փառք քեզ, Աստուած, փառք քեզ, յաղագս  
ամենայնի, Տէր, փառք քեզ:**

**Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ  
և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:**

**Սուրբ, սուրբ, սուրբ ես Տէր զօրութեանց,  
և են երկինք և երկիր փառօք քո:**

**Խաչ, օգնեա ինձ.**

**Տէր, ողորմեա.**

**Աստուած քաւեա զիս զմեղաւոր.**

### **Դ Ա Ս Ի Ց Ա Ռ Ա Զ**

**Ամենաբարի Աստուած, առաքեա տա մեզ  
նորհս Հոգւոյդ քո սրբոյ, զի պարզենցէ մեզ  
զմիտս և կաղզութեոցէ զզօրութիւնս հոգւոց մե-  
րոց, որպէս զի մեք ընդունելով զաւանվեալ մեզ  
ուսմունս զարգացուք, քեզ Ստեղծողիդ մերում**

\* Այս մասում զետեղած նիւթն առաջին պատրաստական  
դասատան դասընթացըն է, և հարկաւոր է վերին դասատանց  
աշակերտների ու աշակերտուհների կրկնողութեան համար։

**ի փառս և ի մխիթարութիւն ծնողաց մերոց,  
յօդուտ եկեղեցւոյ և հայրենեաց:**

**Գոհանամք պքէն, Արարիչ, զի արժանի արա-  
րեր զմեզ չնորհաց քոց, ընդունելութեան ուս-  
մանս: Օրհնեա զմեծաւորա, զծնողս և զուսուցիչս  
մեր, որք առաջնորդեն մեզ ի գիտութիւն բա-  
րութեան, և տուր մեզ կարողութիւն ի շարու-  
նակութիւն ուսմանս այսորիկ:**

### **Ճ Ա Ճ Ի Ց Ա Ռ Ա Զ**

**Աչք ամենացուն ի քեզ, Տէր, յուսան և Դու  
տաս կերակուր նոցա ի ժամու. բանաս զձեռն քո և  
լցուցանես զամենեսին քաղցրութեան կամօք քովք:**

### **Ճ Ա Ճ Ի Ց Յ Ե Տ Ո Ց**

**Տէր Յիսուս, լցաք ի բարութեանց քոց: Տա-  
ցուք զոհութիւն Տեսուն Աստուածոյ մերոյ՝ Հօր և  
Որդւոյ և Հոգւոյն սրբայ: Զլիութիւն սեղանոյս  
անհատ և աննուազ արասցէ Քրիստոս Աստուած  
մեր, որ զմեզ կերակրեաց և լիացաց՝ նմա փառք  
յաւիտեանս. ամէն**

### **Ա Ռ Ա Յ Օ Տ Ե Ա Ն**

**Գոհանամք պքէն, Տէր Աստուած մեր, որ զար-**

թուցեր զմեզ ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողոր-  
մութեան Քա: Զարթն զմիտս մեր արդարութեամբ  
առ Քեզ, Տէր Աստուած մեր, զի տեսցեն աչք  
մեր զփրկութիւն քո, եկեսցէ և բնակեսցի առ  
մեզ Աստուածութիւն քո և ողորմութիւն քո հո-  
վանի և պահապան լիցէ ի վերայ պաշտօնէից  
քոյ: Եւ զմեզ զծառայրս քո արժանի արա ի տուէ  
և ի զիշերի և յամենայն ժամու միշտ խորհիլ  
ի սէր պատուիրանաց քոց և զոհանալով փառա-  
ւորել զշայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ, այժմ  
և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

### Ե Ր Ե Կ Ո Յ Ե Ը Ն

Հրեշտակի խաղաղութեան յանձն արա զան-  
ձինս մեր, Տէր զօրութեամնց, որ եկեալ պահեսցէ  
զմեզ անխոռվս ի տուէ և ի զիշերի յարթնու-  
թեան և ի հանգստեան մերում, զի դու ես Տէր,  
Սրարիշ լուսոյ և հաստիշ զիշերի:

### Ս Ո Ւ Թ Բ Խ Ա 2 Ի

Պահպանեա զմեզ, Քրիստոս Աստուած մեր,  
ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչի քո  
ի խաղաղութեան. և փրկեա յերմելի և յանե-  
րեսոյթ թշնամւոյն. արժանաւորեա զոհութեամբ  
փառաւորել զՔեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյն սրբոյ,  
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

**Ս Ո Ւ Թ Բ Խ Ա 2 Ի**  
Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և  
անմահ, որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ:

### Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ա Ծ Ն Ի

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս  
Աստուածածին Մարիամ, մայր Քրիստոսի, մատու  
գուղաշանս մեր Որդոյ քո և Աստուծոյ մերոյ:  
Փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտան-  
գից մերոց:

### Յ Ա Ր Ո Ւ Թ Ե Ը Ն

Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ  
կոխեաց, և յարութեամբն իւրով մեզ զկեանս  
պարզեաց, նմա փառք յաւիտեանս. ամէն:

### Տ Օ Ւ Ե Ր

(Պատմութիւնները պէտք է անցնել պատկերների վերայ):

1. Սուրբ կոյս Մարիամի ծնունդը—Սեպտեմբերի 8-ին:
2. Սուրբ կոյս Մարիամի ընծայումն Տաճարին Նոյեմբերի 21-ին:
3. Սուրբ կոյս Մարիամի աւետումն—Սպրիլի 7-ին:
4. Յիսուս Քրիստոսի ծնունդը—Յունվարի 6-ին:
5. Տեառնդնդառաջ կամ Յիսուսի քառասնօրեայ Տաճար տանելը—  
Փետրվարի 14-ին:
6. Յիսուսի մկրտութիւնը—Յունվարի 6-ին:
7. Յիսուսի պայծառակերպութիւնը կամ Վարդավառ:
8. Մազկազարդ:
9. Աւագ Հինգշաբթի:

10. Յիսուսի խաչելութիւնը:
  11. Յիսուսի Խաղումը:
  12. Յիսուսի յարութիւնը — Զատիկ:
  13. Համբարձումը:
  14. Հոգեգալուստ:
  15. Առաջին Լուսաւորիչները — Սուրբ Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալները:
  16. Սուրբ Աստուածնի Վերափոխումը:
  17. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ:
  18. Խաչվաց:
- |  |                  |
|--|------------------|
| 1. Մէր Հաւատալիքը — Հաւատի հանգանակը տես | Դանիական պատճեն  |
|  | Գասագըքի երես 11 |
| 2. Տէրունական աղօթք                      | » » 44           |
| 3. Տասն պատուիրաններ                     | » » 51           |
| 4. Ինն երանութիւններ                     | » » 56           |

## ԵՐԳԵՐ

Այսօր տօն է ծննդեան, աւետիս,  
Տեառն մերոյ և յայտնութեան, աւետիս,  
Այսօր սուրբ կոյսն անապական, աւետիս,  
Ծնաւ, երեր զանմահ արքայն, աւետիս,  
Այսօր հրեշտակը յերկնից իշան, աւետիս,  
Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն, աւետիս:

Խորհուրդ մեծ և սքանչելի,  
Որ յայսմ աւուր յայտնեցաւ,  
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս,  
Տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ  
Ի Բգթղեհէմ քաղաքի.  
Որդիք մարդկան օրհնեցէք,  
Զի վասն մեր մարմնացաւ:  
Անբաւելին երկնի և երկրի  
Ի խանձարուրս պատեցաւ,  
Ոչ մեկնելով ի Հօրէ  
Ի սուրբ այրին բազմեցաւ:  
Այսօր ձայնն Հայրական,  
Յերկնից իշեալ հաճոյական.  
Սիրեցելոյ Որդւոյ վկայն,

Այ յորդորէ, գետ յորդորէ, գետ յորդանան,  
Յորդորական ձայնիւ երգէր մեծ Կարապիտն  
Յովհաննէս:

Յամենայնի օրհնեալ ես Տէր, օրհնեմք զքեզ.  
Գովեմք զքեզ, գոհանամք զքէն, աղաչեմք զքեզ,  
Տէր Աստուած մեր:

Միայն սուրբ, Միայն Տէր, Յիսուս Քրիս-  
տոս, ի վասու Աստուծոյ Հօր. ամէն:

Ամէն Հայր սուրբ, Որդիկ սուրբ, Հոգիկ սուրբ:  
Օրհնութիւն Հօր և Որդւոյ և Հոգւսն սրբոյ, այժմ և  
միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Սստուած մեր և Տէր մեր երևեցաւ մեզ օրհ-  
նեալ եկեալ անուամբ տեառն:

Եղիցի անոն Տեառն օրհնեալ յայսմհետէ մին-  
չև յաւիտեան:

Մարմին տէրունական և արիւն փրկչական կայ  
առաջի, երկնային զօրութիւնք յաներեոյթս եր-  
գեն և ասեն անհանգիստ բարբառվ սուրբ, սուրբ,  
սուրբ Տէր զօրութեանց:

Խաչի քո Քրիստոս եկրպագանեմք,  
և զուրբ խաչելութիւնդ քո մեծացուցանեմք  
և զուրբ թաղումդ քո փառաւորեմք.

Եկալք հաւատացեալք, երկրպագեսցուք  
Քրիստոսի Սստուծոյ մերոյ, վասն զի եկն  
՚ի ձեռն Խաչին իւրոյ շնորհեաց պարզես  
աշխարհի:

Սուրբ Սստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ,  
որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Փառք սուրբ խաչիդ, ալէլուիա  
Խաչելութեանդ, ալէլուիա,  
Սրբոյ թաղմանդ, ալէլուիա.  
Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց

և ետուր ուրախութիւն սրտից մերոց.  
՚ի պտղոյ, ցորենոյ, գինոյ և ձիթոյ իւրանց լցու-  
ցեր զնոսա:

Յարեաւ Քրիստոս ի մեռելոց, ալէլուիա:  
Եկալք ժողովուրդ, երգեցէք Տեառն, ալէլուիա,  
Յարուցելոյն ՚ի մեռելոց ալէլուիա,  
Որ զաշխարհս լուսաւորեաց, ալէլուիա:

Ողջոյն քեզ՝ Մարիամ՝ լի՛ շնորհօք, ուրախ  
լեր բերկրեալզ. Տէր ընդ քեզ: Օրհնեալ ես զու  
ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո՝  
Յիսուս. որբուհի Մարիամ մայր Սստուծոյ՝ բա-  
րեխօսեա վասն մեր մեղաւորացս, այժմ և ի ժամ  
մահու մերոյ. ամէն:

Սնկանիմք առաջի քո սուրբ Սստուածածին  
և աղաչեմք զանարատ զկոյսդ, բարեխօսեա  
վասն անձանց մերոց, և աղաչեա զՄիածին  
Որդիդ փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն  
վտանգից մերոց: Որ արձակիչդ ես կապելոց՝  
պարզեատու ամենեցուն. այսօր հայսմամբ ծե-  
րունւոյն՝ արձակեա և զիս զբազմամեզս ի կա-  
պանաց մահու ի կեանսն յաւիտենից:

Սրբուհոյ Սստուածածին բարեխօսութեամբն  
Տէր, ընկալ զաղաչանս մեր և կեցն:



3368



ԳԻՆԵ Է ՅՈ ՇԱՀԻ